Ի հարկե, համավճարը պետք է կոնստանտ թիվ լիներ, պետք է միասնական մոտեցում լիներ, որը չկա, եւ օրենքը խրթին է գրված, ուստի քաղաքացիների դժգոհությունները բնական են: Ընտրությունից առաջ բուժհաստատությունները բանավոր հրահանգ էին ստացել, որ 3 հազար դրամից ավելի համավճար չվերցնեն՝ քարոզչական նպատակներով:

Կարդացեք՝ էջ 4

«Վաղը առավոտյան կգնաք, Գագիկ Ծառուկյանի առյուծները «կգողնաք, կբերեք»... հուլիսի 5-ին անծանոթ համարից այս բովանդակությամբ SMS-ներ ստացան ՀՀ գրեթե բոլոր ուժային կառույցների ղեկավարները: Բնականաբար, խառնվեցին իրար, բայց ոչ թե Գագիկ Ծառուկյանի անունը լսելուց, այլ բուն հրահանգից՝ «գողնալ առյուծներին»:

Կարդացեք՝ էջ 5

Քանի որ ընտրություններն ավարտվել են, եւ այլեւս չի կարող ձայնագողությամբ ու թվանկարչությամբ զբաղվել, մնում է, որ ընդդիմադիրներից մանդատներ գողանա, պատգամավորների իրենով անի: Այս երեւույթը քաղաքագիտության մեջ բնութագրվում է մի բառով՝ «անասնագողություն»: ՀՀ ԱԺ-ում նման դեպքերը լայն տարածում ունեն:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 112 (4247), 8 հուլիս, չորեքշաբթի, 2026

www.hraparak.am

ՔՊ-ում գրեթե ավարտվել է խորհրդարանի ղեկավար կազմի ընտրությունը, ԱԺ նախագահի, փոխնախագահների, խմբակցության ղեկավարի թեկնածուներն արդեն ընտրված են, մնացել են խմբակցության քարտուղար եւ ԱԺ մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները: 12 մշտական հանձնաժողովներից 9-ը, Դոնթի բանաձեւով, բաժին է հասնում ՔՊ-ին, 3-ը՝ «Ուժեղ Հայաստանին», իսկ «Հայաստան» դաշինքին հանձնաժողովի նախագահի պաշտոն չի հասնում: Արդյո՞ք ընդդիմությունը կստանձնի պաշտոնները, եւ «ուժեղները», 21-ի օրինակով, մեկ հանձնաժողովի նախագահի պաշտոնը կգիջեն կրտսեր գործընկերներին: Հարցի պատասխանն ՈՒՀ-ում դեռ չունեն: Ավելին, անգամ որոշում չունեն՝ կվերցնե՞ն պաշտոնները, թե՞ կբոյկոտեն դրանք: Իսկ ՔՊ-ում հանձնաժողովների նախագահների ընտրության հարցը բուռն քննարկումների առիթ է դարձել: Առաջ ԱԺ ֆրակցիան է ընտրել հանձնաժողովների նախագահների թեկնածությունը, այս անգամ խոսակցություն կա, որ վարչությունն է ընտրելու: ՔՊ-ում խուլ դժգոհություն կա, որ պառլամենտական կառավարման համակարգում փաստացի խորհրդարանականները զրկված են որոշումներ կայացնելու իրավունքից եւ պարզապես «ուսապարկեր» են: Ի դեպ, չնայած ամսվա վերջին ԿԸՀ-ն կտրամադրի պատգամավորների մանդատները, սակայն ընդդիմադիր խմբակցություններն ասում են, որ ո՛չ խմբակցության ղեկավարներին են ընտրել, ո՛չ քարտուղարներին:

Այս օրերին քրտնաջան՝ 24/7 ռեժիմով աշխատում են ոչ միայն Քննչական կոմիտեն, դատախազությունն ու ԱԱԾ-ն, այլեւ Պետական եկամուտների կոմիտեն: ՊԵԿ որոշ վարչություններում արդեն մոտ մեկ ամիս է՝ աշխատակիցներն արտաժամյա մնում են եւ մինչեւ ուշ գիշեր աշխատում: Թիրախը ԲՀԿ առաջնորդ, գործարար Գագիկ Ծառուկյանին պատկանող բիզնեսներն են: Վերեւից հանձնարարված է՝ ամեն գնով խախտումներ հայտնաբերել, եւ ՊԵԿ-ը ժրաջանորեն կատարում է քաղաքական հետապնդման՝ իրեն վստահված մասը: Լայնածավալ ստուգումներ են իրականացնում, թղթերն են ուսումնասիրում, փորձում են մի բան գտնել: Ի դեպ, հարկերից խուսափելու հիմքով Գագիկ Ծառուկյանին չէին կարող կալանավորել: Օրենքը նման դեպքերում չվճարված հարկերը պարտադրում է վճարել՝ առանց ազատությունից զրկելու: Թերեւս, այդ պատճառով են փորձում այլ մեղադրանքներ կպցնել, օրինակ՝ խարդախություն, բայց անգամ իրավաբանները, ծանոթանալով ՔԿ պաշտոնական հաղորդագրությանը, չեն հասկանում, թե ինչում են մեղադրում Ծառուկյանին:

Կարեկցանքի արժանի

Հասարակության մի մասի համար դիտարժան շոու է Գագիկ Ծառուկյանի կալանավորման պատմությունը, որից մեծ բավականություն են ստանում, որովհետեւ, նախ՝ ատում են բոլոր հարուստներին, հետո՝ մնացել են ՔՊ-ական քարոզչության տակ, թե՝ ձեզ թալանել են, հանցագործ են, պետք է պատժվեն: Կարեւոր չէ՝ ինչի համար եւ ինչպես: Այդ մեղադրանքները միայն բառերից են կազմված՝ դրանց տակ ոչ մի ապացույց, փաստաթուղթ, իրական հանցանք չկա: Ու խոսքը միայն Ծառուկյանի մասին չէ: Այն իրավապահները, որոնք հարուցել են Սամվել Կարապետյանի, Միքայել Աջապահյանի, Բագրատ ու Արշակ սրբազանների, Աշոտ Երկաթի, Դավիթ Ղազինյանի, Ավետիք Չալաբյանի վարույթները եւ այդ հիմքերով նրանց կալանավորել, ուղղակի ունակ չեն օրենքի տառը պահել եւ իրավական պատճառաբանված մեղադրանքներ առաջադրել որեւէ մեկին: Իսկ «շեֆի» հրահանգները կատարել կարող են: Կարող են «շեֆի» դուրը չեկած մարդուն գետնին տապալել, թեեւ նա որեւէ դիմադրություն ցույց չի տալիս, դիմակներով ու ոհմակով հարձակվել նրա վրա, ձեռքերին փոքր ձեռնաշղթաներ անցկացնել եւ, իրենց կարծիքով՝ նվաստացնել, որ «շեֆը» նայի այդ կադրերը, ու «սիրտը հովանա»: Պարզապես կարեկցել կարելի է այն մարդուն, որը մի կերպ իշխանություն է պահում եւ իշխանական լծակներն օգտագործում իր «թշնամիների», իր դեմ ընդվզող մարդկանց նկատմամբ, որն ապօրինություններ անելուց վատ չի զգում, դիմացինին ստորացնելուց էլ հաճույք է ստանում: Սա ո՛չ ուժի, ո՛չ հզորության նշան է, ինչքան էլ հասարակության կիսագրագետ ու նախանձ մի փոքր հատված դրանից «կայֆ» ստանա: Սա թուլության, խեղճության, վախերի նշան է: Ինչպես հոգեկան խնդիրների նշան է առյուծներին քնեցնելն ու կենդանաբանական այգի տանելը ու դրա հետեւանքով ալբինոս եզակի տեսակի առյուծի անկման հեղինակ դառնալը:

Ի թիվս այլ օբյեկտների, նախօրեին իրականացված խուզարկությունների արդյունքում իրավապահները կապարակնքել են նաեւ ՀԱՕԿ-ի շենքը, իշխանական քարոզչամեքենան էլ տարածում էր, թե հաստատությունում լայնածավալ ստուգումներ են իրականացվում: Ակնարկում էին, թե ենթադրյալ չարաշահումների պատճառով են կասեցրել կառույցի գործունեությունը: Մինչդեռ տեղեկացանք, որ ընդամենը վեց ամիս առաջ է ՀԱՕԿ-ում աուդիտ անցկացվել, եւ էական խախտումներ չեն հայտնաբերվել, որոնք կարող են հիմք հանդիսանալ կազմակերպության գործունեության դադարեցման համար: Մասնավորապես, աուդիտն իրականացվել է անցած տարեվերջին՝ դեկտեմբերի 31-ին, եւ բաց աղբյուրներում կա նաեւ հրապարակված եզրակացությունը: Սա եւս փաստում է, որ Ծառուկյանի նկատմամբ իրականացվում է քաղաքական հաշվեհարդար, եւ Փաշինյանը նրան չի ներում իր հասցեին արված հայտարարությունների համար, ու այս ամենը ոչ մի կապ չունի իրավախախտումների հետ:

ՈՉ ՄԵԿԸ ՉԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒՄ

Հուլիսի 2-ին Արցախի ԱԺ նախագահ Աշոտ Դանիելյանի անսպասելի հրաժարականից հետո ԱԺ խորհրդարանականները նրան փոխարինողի հարցն են քննարկում: Երեկ տեղեկացանք, որ պատգամավորներից որեւէ մեկը հանձն չի առնում ստեղծված իրավիճակում զբաղեցնել այդ պաշտոնը՝ կանխատեսելով, որ հայտնվելու է պետության պատժիչ մեքենայի թրթուրների տակ: Պատգամավորները կարծում են, որ այդ ծանր առաքելություն-պարտականությունը պետք է իր ուսերին վերցնի իշխող կուսակցությունը՝ ադրբեջանական գերության մեջ գտնվող Արայիկ Հարությունյանի կամ Սամվել Բաբայանի թիմակիցները: Սակայն Հարությունյանի «Ազատ հայրենիքում» ցանկացող չկա, Բաբայանի թիմակիցներն էլ են հրաժարվում՝ համարելով, որ դա մեծ խմբակցության պարտականությունն է: Մինչդեռ հուլիսի 9-ին լրանում է հրաժարականի մեկ շաբաթը, եւ եթե Դանիելյանը պնդի այն, ապա մեկ ամսվա ընթացքում խորհրդարանը պետք է նոր նախագահ ընտրի: Այժմ ԺՊ-ն Բաբայանի թիմակից, ԱԺ փոխնախագահ Գագիկ Բաղունցն է:

ԳՈՐԾ

ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ Ի՞ՆՉ ԳՈՐԾՆ Է, ԹԵ ԾԱՌՈՒԿՅԱՆԸ ԱՖՐԻԿՅԱՆ ՋՈՒՆԳԼԻՆԵՐՈՒՄ ԻՆՉ ՈՐՍ Է ԱՐԵԼ

Քննչական կոմիտեն հայտնում է, որ Կոտայքի մարզային քննչական վարչությունում վայրի կենդանի կամ թռչուն ապօրինի որսալու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում Գ. Ծ.-ին պատկանող առանձնատնից առգրավվել են տարբեր կենդանիների եւ թռչունների 190 հատ խրտվիլակ, ինչպես նաեւ՝ 3 առյուծ եւ 1 վագր, որոնք ճանաչվել են որպես իրեղեն ապացույց եւ տեղափոխվել Կենդանաբանական այգի:

«Ապօրինի որսի հետեւանքով շրջակա միջավայրին պատճառվել է 30 մլն ՀՀ դրամի վնաս: Գ. Ծ.-ի առանձնատանը պահվող մյուս կենդանիները նախատեսվում է առգրավել եւ պատասխանատու պահպանությանը հանձնել հաջորդող օրերին: Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է»,- նշվում է հաղորդագրությունում:

Գագիկ Ծառուկյանի շուրջ ստեղծված իրավիճակի մասին, այդ թվում՝ նրան օրինական հիմունքներով պատկանող կենդանիներին որպես իրեղեն ապացույց առգրավելու մասին ՔԿ հաղորդագրության վերաբերյալ զրուցել ենք նախկին դատախազ **Ռաֆֆի Ասլանյանի** հետ:

- Վերջին մի քանի օրերին դատահիրավական համակարգը, հագուրդ տալով Նիկոլ Փաշինյանի «կրքոտ» ցանկություններին, որոշել է օրենքին հակառակ գործողություններ անել: Նախ Սահմանադրական դատարանի խիստ սուբյեկտիվ որոշումը եղավ, որով հաստատեցին ԿԸՀ թույլ տված անօրինականությունը, ապա՝ Գագիկ Ծառուկյանի դեմ սկսած արշավը, նրան կալանքի տանելու, ինչպես նաեւ նրան պատկանող կենդանիներին Երեւանի կենդանաբանական այգի տանելու քայլերը: Քննչական կոմիտեն հայտարարեց, որ առյուծները որպես «իրեղեն ապացույց» են առգրավվել: Իսկ դատական իշխանության հանդեպ որեւէ վստահություն չկա, որ օրենքը կպահպանվի: Ի վերջո՝ ինչպե՞ս կարող է առյուծը կամ վագրը համարվել իրեղեն ապացույց:

- Կենդանին կարող է լինել իրեղեն ապացույց՝ ապօրինի որսի իմաստով, բայց այստեղ կա մի շատ կարեւոր «բայց»: Մենք՝ բոլորս, շատ լավ գիտենք, որ առյուծը Հայաստանում հանդիպող կենդանատեսակ չէ, հետեւաբար, եթե անգամ ապօրինի որս է տեղի ունեցել, ապա դա տեղի է ունեցել ինչ-որ մի աֆրիկյան անտառում, բայց հաստատապես՝ ոչ Հայաստանի անտառներում: ՀՀ քննչական կոմիտեի ի՞նչ գործն է, թե Ծառուկյանն աֆրիկյան ջունգլիներում ինչ որս է արել: Այս ամենը հերթական անգամ փաստում է, որ մի հոգեպես անառողջ մարդ՝ Նիկոլ Փաշինյանը, թելադրել է իր կամքը, իսկ իրավապահները կատարում են այն: Նա մեկ ամիս առաջ ասում էր, թե ինչ է լինելու, ուստի այստեղ չկա իրավաբանություն, եւ մենք չենք կարող արդարադատությունը քննարկել: Սա ամբողջապես քաղաքական պրոցես է՝ քաղաքական պատվերի շրջանակներում: Լրատվամիջոցներից տեղեկացա, որ առյուծներից մեկը սատկել է արդեն: Դա, ըստ մեր օրենսդրության, համարվում է հանցագործություն: Այս ամենին պետք է քրեական վարույթ հաջորդի: Ո՞վ է քնեցրել կենդանիներին, ո՞վ է այդ ներարկումները կատարել: Այ, սա է հանցագործությունը, ոչ թե աֆրիկյան ջունգլիներում կենդանի որսալը: Ես զարմանում եմ ուղղակի իրավապահ կառույցների վրա: Այնտեղ աշխատող մարդիկ ամեն ինչ՝ արժանապատվություն, ամոթ, ամեն բան դրել են մի կողմ եւ դարձել ծիծաղի առարկա:

- Այսինքն՝ այժմ առավել, քան երբեւէ հստակ է, որ դատահիրավական համակարգը Փաշինյանի ձեռքի խամաճիկն է դարձել:

- Փաշինյանը հրամանը տվել է, իսկ սրանք կատարողներն են ընդամենը: Նիկոլ Փաշինյանը չի էլ թաքցնում, որ ինքն է հրահանգ տվողը: Նա ասել էր, որ Ծառուկյանը նստելու է: Նրան ենթակա եւ ոչ ենթակա պետական կառույցները դարձել են այդ մեկ անձի կամակատարները: Ինչ վերաբերում է բուն քրեական վարույթին, ապա ես ուզում եմ նախ հասկանալ, թե ինչու են Ծառուկյանին տանում կալանքի, ինչ է արել նա: Խափանման միջոց կալանքն աբսուրդ է ուղղակի: Մարդուն ձեռնաշղթա են հագցրել: Ձեռնաշղթա հագցնելը որոշակի նպատակներ ունի, բայց ստացվել է այնպես, որ մի ամբողջ պետություն չունի Գագիկ Ծառուկյանի ձեռքի չափերով ձեռնաշղթա, եւ մենք տեսանք, որ անգամ այդ՝ չափերով փոքր ձեռնաշղթան ստիպել էին Ծառուկյանին կրել, որպեսզի Նիկոլ Փաշինյանի կրքերին հագուրդ տան, որ Փաշինյանը տեսնի եւ հաճույք ստանա: Սա էլ է ընդգծում իրավապահ մարմինների աշխատանքի ձեւականությունը ու եւս մեկ անգամ ի ցույց է դնում, որ ամեն բան արվում է Նիկոլ Փաշինյանի ցանկությամբ:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տավուշի գյուղերից հեռանում են

Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերից գաղթը շարունակվում է: Քանի որ Ռուսաստանում պատերազմ է, գաղթողներն այժմ չեն կարող մեկնել Ռուսաստան, հիմա էլ «գաղթում են» դեպի մայրաքաղաք, հիմնականում բնակություն են հաստատում Երեւանում, մայրաքաղաքի մոտակա բնակավայրերում: Չնայած գյուղերում որոշ ծրագրեր են իրականացվում, ճանապարհներ են ասֆալտապատվում, տուֆապատվում, պետական աջակցությամբ տներ են կառուցվում եւ այլն, սակայն գյուղացիների մեծ մասը եկամտի կայուն աղբյուր չունի՝ դա է մարզից մայրաքաղաք քոչելու պատճառը: Կարկտահարությունը, երաշտը, ոռոգման ջրի բացակայությունը գյուղատնտեսությունը ոչ շահութաբեր են դարձրել, որից ստացած եկամտով հնարավոր չէ այլեւս գոյատեւել, ուստի շատ գյուղացիներ ստիպված փոխում են իրենց բնակավայրը՝ գալիս են Երեւան, որ աշխատանք գտնեն եւ կարողանան գոյատեւել, թեկուզ վարձու բնակարաններում ապրելով:

ՄԱՐԶՊԵՏԸ ՐԱՀԱՆԳԵԼ Է ՔԱՆԴԵԼ ԲԵՐԴՈՒՄ ԻՇԽՈՂ ԿՈԱԼԻՑԻԱՆ՝ ՀՍՊԱՍԵԼՈՎ 2027-ԻՆ

Բերդ համայնքի ավագանու վերջին երկու՝ մայիսի 21-ի եւ հունիսի 18-ի հերթական նիստերին ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամները չեն մասնակցել: Այդ նիստերին մասնակցել է ավագանու 11 անդամ, բոլորն էլ՝ ավագանու «Հորավոր համայնք» խմբակցության անդամները, որոնց թվում՝ Բերդ համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանը: 25 անդամից բաղկացած համայնքի ավագանու կազմում «Հորավոր համայնք» խմբակցությունն ունի 12, «Քաղաքացիական պայմանագիրը»՝ 11, «Արժանապատիվ սերունդ» խմբակցությունը՝ 2 անդամ: Ուշագրավ է, որ «Արժանապատիվ սերունդ» խմբակցության անդամները նույնպես չեն մասնակցել ավագանու վերջին 2 նիստերին: Ակնհայտ է, որ բոյկոտը եղել է կազմակերպված եւ որոշակի նպատակներ է հետապնդել:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության 11 անդամները համայնքի ավագանու 2 նիստերն ինչո՞ւ են բոյկոտել, ո՞րն է դրա պատճառը: Ըստ հավաստի աղբյուրների՝ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանն իր կուսակիցներին հրահանգել է, որ ամեն գնով Բերդ համայնքում ՔՊ-ի եւ «Հորավոր համայնքի» կոալիցիան պետք է քանդվի: Վարչապետ Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա ամուսնության քավոր, 2021թ. ապրիլի 8-ից մարզպետ աշխատող Ղալումյանը վստահ է, որ «Հորավոր համայնք» խմբակցությունից ավագանու անդամ կամ անդամներ կգրավեն իրենց կողմը եւ այդկերպ Բերդի ավագանու կազմում կունենան մեծամասնություն, որից հետո կարող են համայնքում իշխանափոխություն իրականացնել, որ ՔՊ-ն միայնակ կառավարի համայնքը: Սակայն նա երեւի իրազեկված չէ, որ Բերդի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության մեջ համաձայնություն չկա համայնքի ղեկավարի միասնական թեկնածուի վերաբերյալ:

Համայնքի ղեկավարի պաշտոնին հավակնություններ ունի ավագանու ՔՊ-ական 2 անդամ, սակայն նրանց որպես համայնքի ղեկավար ընտրելու պատրաստ է ավագանու 3 կամ 4 անդամ: Իրազեկ աղբյուրները հայտնում են, որ Բերդում իշխանափոխություն անելու ջատագով է նաեւ Տավուշի մարզպետի տեղակալ Նարեկ Ղուշչյանը, որի մտերիմ ընկերը Բերդ համայնքի ավագանու ՔՊ խմբակցության անդամ է: Ըստ այդմ, փոխմարզպետը հույս ունի, որ իր ընկերը կընտրվի Բերդ համայնքի ղեկավար, ինչին էլ փորձում է աջակցել:

Հիշեցնենք, որ 2022 թ. սեպտեմբերի 25-ին կայացած ՏԻՄ ընտրություններում Բերդում հաղթեց ընդդիմադիր «Հորավոր համայնք» դաշինքը, սակայն, ինչպես Հայաստանի շատ համայնքներում, ՔՊ-ն մտադիր չէր ընտրություններում հաղթած ուժի իշխանությունը հանդուրժել: Առաջադրված քրեական մեղադրանքներով, կալանավորմամբ չեզոքացրին Բերդ համայնքը 2012-2022 թվականներին ղեկավարած, «Հորավոր համայնք» դաշինքի նախընտրական ցուցակի 1-ին համար Հարություն Մանուչարյանին, ապա՝ 2-րդ համար, համայնքի ղեկավարի տեղակալ Սամվել Հովսեփյանին: Եվ ստեղծված բարդ իրավիճակում ավագանու 2022թ. նոյեմբերի 10-ի նիստում «Հորավոր համայնք» դաշինքը համայնքի ղեկավար ընտրեց դաշինքի նախընտրական ցանկի 3-րդ համարին՝ Աստղիկ Հակոբյանին: Սակայն որոշ ժամանակ անց իշխանությունը որոշ լծակներ գործադրելով՝ հասավ այն բանին, որ Բերդ համայնքը ղեկավարելու համար կոալիցիա կազմվեց. համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակվեց ավագանու ՔՊ խմբակցության անդամ Սեւակ Բաղալյանը, համայնքի 4 գյուղերում, որտեղ 2022թ. սեպտեմբերի 25-ին ՔՊ-ն ավելի շատ քվեներ է ստացել, վարչական ղեկավարներ նշանակվեցին ՔՊ-ի առաջադրած անձինք:

Այս տարիներին սահմանամերձ Բերդ համայնքի ղեկավարման գործում փխրուն հավասարակշռություն է պահպանվել, որը հունիսի 7-ի ընտրություններով վերահաստատված փաշինյանական իշխանությունը որոշել է խախտել եւ համայնքն ամբողջությամբ զավթել: Բերդի ավագանու հերթական ընտրություններին դեռ մեկ տարուց ավելի կա՝ դրանք կայանալու են 2027-ին: Սակայն մարզպետ Ղալումյանը, հավանաբար, Երեւանից հրահանգ է ստացել եւ մտադրվել է ընտրություններին չսպասել, այլ հիմա իշխանափոխություն անել՝ «Հորավոր համայնք» խմբակցությունից մարդագողություն անելով: Իսկ այսօր ձեռք գցած Բերդի համայնքապետարանի պաշտոններն ու ռեսուրսը հնարավորություն կտան 2027-ի ավագանու ընտրություններում ՔՊ-ի հաղթանակն ապահովել: Սակայն այժմ ՔՊ-ն Բերդ համայնքի ղեկավարի համաձայնեցված թեկնածու չունի, իսկ մեկ տարում քաղաքական վիճակը կարող է եւ փոխվել:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՎՆԱՍՆԵՐ ԵՆ ՊԱՏՃԱՌԵԼ, ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԱՌԱՋԱՑՐԵԼ

ԲԻՇԵՍ ՊԱՀԵՍ

Ադամյանը՝ Ծառուկյանի գործարանի մասնավոր կենդանաբանական այգին ինչ վիճակում է եղել, եւ ինչ պայմաններում են պահվել կենդանիները. այս հարցերի պատասխանները ստանալուց հետո միայն կարող ենք արձանագրել՝ այդ գործողություններն օրինական են, թե՝ ոչ: Բայց անզեն աչքով երբ նայում ենք, իր մոտ, պետք է անկեղծ լինենք, կենդանիները լավ վիճակում են: Մենք Գյումրիի այգում ու մի շարք ռեստորանային համալիրներում տեսել ենք շատ վատ խատեսված դեպքերում: Ինչպես նաեւ պետք է ունենան հատուկ լիցենզիա եւ պայմաններ՝ այդ կենդանիներին պահելու համար: Այս պահին դեռ կան Հայաստանում մասնավոր կենդանաբանական այգիներ, թեեւ ես՝ ինքս, կատեգորիկ դեմ եմ, բայց օրենքը թույլ է տալիս: Օրինակ, «Հրաշք այգի»-ում եւս կան պահվող վայրի կենդանիներ»: Այս ռեստորանային համալիրը գտնվում է Արարատի մարզում եւ կապված է Հովիկ Աբրահամյանի նախկին օգնականի անվան հետ:

Հարցին՝ արդյոք կենդանիները սթրեսակայո՞ւն են, եւ նման տեղափոխումները չե՞ն ազդում նրանց վրա, Ադամյանը պատասխանեց. «Այո, կենդանիները ենթարկվում են սթրեսի, բայց ավելի մեծ սթրեսի կենթարկվեն այն պարագայում, եթե ունենան ոչ պատշաճ պայմաններ իրենց համար: Ես չգիտեմ, թե Գագիկ Ծառուկյանի մասնավոր կենդանաբանական այգին ինչ վիճակում է եղել, եւ ինչ պայմաններում են պահվել կենդանիները. այս հարցերի պատասխանները ստանալուց հետո միայն կարող ենք արձանագրել՝ այդ գործողություններն օրինական են, թե՝ ոչ: Բայց անզեն աչքով երբ նայում ենք, իր մոտ, պետք է անկեղծ լինենք, կենդանիները լավ վիճակում են: Մենք Գյումրիի այգում ու մի շարք ռեստորանային համալիրներում տեսել ենք շատ վատ վիճակում պահվող կենդանիներ ու նրանց, անկասկած, չենք կարող համեմատել Ծառուկյանի այգու կենդանիների հետ: Այստեղ հարց է՝ Ծառուկյանն ունի՞ այդ փաստաթղթերը, թե՝ ոչ»:

Դիտարկմանը՝ եթե չունի փաստաթղթեր, ինչպե՞ս էր կենդանաբանական այգուն սպիտակ առյուծ նվիրում, այդ դեպքում պարտավոր է, չէ՞, ձեռքբերման, տեղափոխման աղբյուրը նշել փաստաթղթերով, Ադամյանն արձագանքեց. «Ըստ երեւույթին, համապատասխան փաստաթղթերն ունեցել է, այլապես կենդանաբանական այգին չէր կարող այդ կենդանուն ընդունել: Կարող ենք ենթադրել, որ եթե մեկ կենդանու համար ունեցել է համապատասխան փաստաթղթերը, կարող էր նաեւ նույն իրավական ճանապարհով մյուս կենդանիների համար էլ ունենալ այդ փաստաթղթերը, բայց մենք պետք է տեսնենք այդ փաստաթղթերը, հասկանանք՝ այդ գործողություններն իրավական էին, թե՝ ոչ, որովհետեւ մեր կառավարության գործողությունների մեծ մասը ոչ իրավական է: Եթե Ծառուկյանն ունենա փաստաթուղթ, իրավական ճանապարհով այդ կենդանիներին կարող է հետ վերցնել»:

Անդրադառնալով կենդանիների քնեցման գործընթացին, Ադամյանը նշեց, որ դա անվտանգ միջոց է, որով ապահովվում է մարդկանց անվտանգությունը: Անդրադառնալով առյուծների տեսակին՝ Ադամյանն ընդգծեց, որ դրանք հազվագյուտ տեսակներ են. «Սպիտակ առյուծներն ալբինոս են, դրանք հազվագյուտ են հանդիպում բնության մեջ եւ ունեն շուկայական շատ բարձր արժեք»: Այսինքն, պարզվեց, որ քնեցումը ճիշտ չեն արել, եւ թանկարժեք առյուծը տեղափոխման արդյունքում անկել է: ԲՀԿ խոսնակ Իվետա Տոնոյանը, անդրադառնալով կենդանիների շուրջ բարձրացած աղմուկին, հայտնեց. «Բոլոր կենդանիների հետ կապված՝ առկա են եղել բոլոր տեսակի թույլտվությունները, պահպանման վայրը, պայմանները՝ բոլորը համապատասխանել են նորմերին»:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ՄԱՌՈՒԿՅԱՆԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՎՆԱՍՆԵՐ ԵՆ ՊԱՏՃԱՌԵԼ, ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԱՌԱՋԱՑՐԵԼ

Ախորեին «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանի առանձնատանն ու բիզնեսներում տեղի ունեցած խուզարկություններից հետո, ԲՀԿ խոսնակ Իվետա Տոնոյանի փոխանցմամբ, կապարակնքվել են Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի շենքը, «Արարատցեմենտ» գործարանը, Երեւանի «Արարատ» կոնյակի, գինու, օղու կոմբինատը, կոմբինատի հարեւանությամբ գտնվող ադմինիստրատիվ շենքը, «Մուլտի Սթոուն» ընկերությունը, «Փարավոն» ռեստորանային համալիրը: Երեկվա դրությամբ չէին գործում նաեւ Ծաղկաձորում գործարարին պատկանող հյուրանոցներն ու գործարանները, հյուրանոցում հանգստացողներին էին անգամ դուրս հրավիրել: Կաթվածահար է եղել շուրջ մեկ տասնյակից ավելի տնտեսությունների գործունեությունը, հարկադիր պարապուրդի է մատնված մոտ տասը հազար քաղաքացի, որոնք մտավախություն ունեն, որ գործազուրկ են դառնում:

«Արարատցեմենտ» գործարանի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար **Արտյոմ Պողոսյանը** մեզ պատմեց, որ նախօրեին իրավապահները վաղ առավոտյան՝ 7-7.30-ի միջակայքում, բառի բուն իմաստով, գրոհել են գործարանի վրա. «Անգամ անվտանգության աշխատակիցներին վախեցնելով, ուժ գործադրելով եւ սպառնալով, որ կձերբակալեն բոլորին»: Դա եղել է գործարանի հերթափոխի ժամին, երբ գիշերային աշխատողներին փոխարինելու է եկել ցերեկային հերթափոխի աշխատակազմը: Քննչական կոմիտեի աշխատակիցները ոչ միայն թույլ չեն տվել աշխատանքի եկած մարդկանց մուտքը գործարան, այլեւ առանց ժամանակ տալու՝ գործարանից դուրս են հանել հոսքագծերի վրա աշխատողներին:

Պողոսյանի խոսքով, այդ պահին աշխատող հոսքագծերն անտեր են մնացել, մինչդեռ այդ աշխատանքը պահանջում է ամենվայրկյանի հսկողություն: Արդյունքում հսկայական քանակությամբ հումք է այրվել, հոսքագծերն են խափանվել. «Երբ խնդրեցինք, որ մասնագետները գոնե մտնեն ներս՝ անջատեն մեխանիզմը, ժամեր հետո թույլ տվեցին, երբ արդեն խափանումներ էին եղել, ու վնասներ հասցվել»: Թե որքան է վնասի չափը, այս պահին Պողոսյանը չի կարող ասել: ՔԿ աշխատակիցները կապարակնքել են գործարանի մուտքն ու ադմինիստրատիվ մասնաշենքը: «Անորոշ ժամկետով կաթվածահար է մեր աշխատանքը, խոսքը շուրջ 1000 աշխատակցի զբաղվածության մասին է, որոնք փաստացի այժմ գործազուրկ են»,- ասաց Պողոսյանը: Տնօրենը տեղեկացրեց նաեւ, որ անգամ թույլ չեն տվել գնորդներին ճանապարհել, ովքեր, սովորականի պես, այդ օրն էլ եկել էին գործարանից ցեմենտի խմբաքանակ տանելու:

Տնօրենի խոսքով, ՔԿ աշխատակիցները գրոհից առաջ ներկայացրել են դատարանի որոշում, որում նշված է եղել, որ աշխատասենյակներում խուզարկությունն արգելվում է, չնայած դրան եւ իրենց մատնանշմանը, որ դատարանը նման բան է գրել, իրավապահ մարմնի աշխատակիցները չեն ենթարկվել դատարանի որոշմանը եւ խուզարկել ու զննել են ողջ տարածքը:

Հիշեցնենք, որ դեռեւս նախընտրական քարոզարշավի ժամանակ Նիկոլ Փաշինյանն անոնսել էր, որ շատ շուտով ԲՀԿ ղեկավարի բիզնեսի «ողնաշարը»՝ Արարատի ցեմենտի գործարանը պետականացվելու է, նշանակվելու է ժամանակավոր կառավարիչ, ինչպես արեցին Սամվել Կարապետյանին պատկանող ՀԷՑ-ի հետ: Գագիկ Ծառուկյանը, պատասխանելով այս հայտարարությանը, ասել էր, որ եթե իշխանությունը նրա սեփականությունը, պատժել նրան՝ իր դեմ դուրս գալու համար: Իսկ նրա արբանյակներից մեկն այսօր բաց տեքստով գրել էր, որ սա «մեսիջ» է բոլոր նրանց, ովքեր ինչ-որ կապ ունեն Ռուսաստանի հետ. «Ով իր կամքով ու գիտակցված կերպով Հայաստանի դեմ ռուսաստանյան գործիք դարձավ՝ լուրջ պրոբլեմներ է ունենալու»: Հասկանալի է, որ այլեւս օրենքը չի գործում մեր երկրում, այլ՝ իշխողների քաղաքական շահերը, ցանկություններն ու հրահանգները:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ ՆՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՆԹԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՍԹՐԵՍԻ

Երեկ ՀՀ քննչական կոմիտեն հաղորդագրություն տարածեց, որ Կոտայքի մարզային քննչական վարչությունում վայրի կենդանի կամ թռչուն ապօրինի որսալու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում Գագիկ Ծառուկյանին պատկանող առանձնատնից առգրավվել են տարբեր կենդանիների եւ թռչունների 190 հատ խրտվիլակ, ինչպես նաեւ՝ 3 առյուծ եւ 1 վագր, որոնք «ճանաչվել են որպես իրեղեն ապացույց եւ տեղափոխվել կենդանաբանական այգի»: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ առյուծներից մեկը չի արթնացել՝ անկել է, ինչի մասին Կենդանաբանական այգին մի կեղծ հաղորդագրություն տարածեց, իսկ Քննչական կոմիտեն վարույթ հարուցեց:

«Հրապարակ»-ի հետ զրույցում բնապահպան **Սիլվա Ադամյանը** հայտնեց, որ Հայաստանում օրենքը թույլ է տալիս, որ մարդիկ ունենան մասնավոր կենդանաբանական այգիներ. «Մասնավոր կենդանաբանական այգիներ ունենալու համար պետք է ունենալ համապատասխան փաստաթղթեր, եթե կենդանիները ներառված են Հայաստանի Կարմիր գրքում կամ ենթակա են CITES միջազգային կոնվենցիային, դրանց պահումը, ներմուծումը, արտահանումը եւ օգտագործումը պահանջում են հատուկ թույլտվություններ եւ թույլատրելի են միայն օրենքով նա-

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼԵՎՍ ԱՆՎՃԱՐ ՉԷ

ՀԱՄԱՎՃԱՐ

Ընտրություններից առաջ ընդդիմադիր դաշտում կարծիքներ էին հնչում, որ պետությունը չունի բավարար միջոցներ՝ առողջապահության ապահովագրությունը ֆինանսավորելու համար, եւ ընտրություններից հետո այն դադարեցվելու է կամ ուղղակի սառեցվելու է, քանի որ ներդրվել էր՝ առանց հիվանդանոցների կարողությունները, պետության առողջապահական բյուջեն հաշվի առնելու:

Եվ ահա, դեռ մի ամիս էլ չանցած՝ տեսնում ենք նորածին համակարգի մահվան առաջին նշանները: Քաղաքացիները մերժումներ են ստանում, կամ էլ նրանցից այս կամ այն անվան տակ հավելյալ գումար են կորզում:

«Ես հունիսի 22-ին գրանցվել էի նեղ մասնագետի մոտ՝ հունիսի 26-ի համար: Ինձ ասացին, որ հունիսի 18-ից արդեն 25% համավճար է գործում, իսկ 26-ին որ եկա, պարզվեց՝ այդ պահին արդեն 50% է: Ինձ թույլ տվեցին 25% վճարել, քանի որ այդ գործող սակագնով էի գրանցվել: Սա՛ է: Օպերացիան ավարտվեց, շքանշանը եւ այլ պարգեւներ բաշխվեցին, մնացածն էլ՝ դե ի՞նչ կարեւոր է»,- գրում է ՀԱԿ վարչության անդամ Սամվել Կարաբեկյանն իր ՖԲ էջում:

Առողջապահության համընդհանուր հիմնադրամից տեղեկացնում են, որ համավճարի կիրառման կարգում որեւէ փոփոխություն տեղի չի ունեցել: «Համավճարը կիրառվում է օրենքով սահմանված կարգով, իսկ մատուցվող ծառայության արժեքը յուրաքանչյուր բժշկական կազմակերպություն սահմանում է ինքնուրույն, ինչը չի կարող գերազանցել սահմանված գնի կրկնապատիկը»,- Կարաբեկյանին պատասխանել է հիմնադրամը, բայց չի համոզել նրան: «Ի՞նչ կար էդ պատասխանի մեջ, որ մեկ էլ համոզեր: Ստանդարտ բյուրոկրատական ոչինչ չասել...»,- նշում է նա:

Ստացվում է, որ ցանկացած բուժհաստատություն կարող է ցանկացած պահի գին սահմանել կամ փոխել իր ծառայությունների արժեքը, հաշվարկել այնպես, ինչպես ինքն է ուզում, իսկ քաղաքացին ստիպված է լինելու վճարել այնքան, որքան պահանջում են, առանց հստակ պատկերացման, թե ինչի համար է վճարում եւ ինչքան է պարտավոր վճարել: Այդ դեպքում ի՞նչ առողջապահության ապահովագրություն, ի՞նչ անվճար բուժծառայություններ, որի մասին ամբողջ քարոզարշավի ընթացքում գլուխ էին գովում Նիկոլն ու «ուրախ ավտոբուսի» մյուս ուղեւորները:

Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանն իր վերջին ասուլիսում թիվ է հնչեցրել՝ առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի ներդրման համար շուրջ 80-97 միլիարդ դրամ ընդհանուր ծախս է կատարվել, սակայն չի ասել, թե որքան է հավաքագրվել այս գործընթացում: «Ծախսը երեք կոմպոնենտ ունի: Մեկը մեզնից վերցվածն է՝ որպես ապահովագրավճար, մյուս մասը պետությունից վերցվածն է, այսինքն՝ բյուջեից, երրորդն էլ, այսպես կոչված, համավճարն է, որը հավաքվում է առողջապահական կազմակերպություններում, որից տրվում է աշխատավարձ եւ այլն»,- պարզեցնում է «Առողջության իրավունք» ՀԿ հիմնադիր, պետական առողջապահական գործակալության նախկին տնօրեն **Ծաղիկ Վարդանյանը**: Օրենքում ասվում է, որ մատուցվող ծառայության արժեքը յուրաքանչյուր բժշկական կազմակերպություն սահմանում է ինքնուրույն, ինչը չի կարող գերազանցել սահմանված գնի կրկնապատիկը: Հիմա՝ քաղաքացին ինչպե՞ս պետք է նախապես իմանա, թե բուժհաստատությունում ինչ համավճար են իրենից պահանջելու՝ 25 տոկոս, 50 տոկոս, ինչքա՞ն:

«Եթե, օրինակ, խորհրդատվության համար սահմանված է 6 հազար դրամ, ապա մինչեւ 12 հազար դրամ բուժհաստատությունը կարող է գին դնել: Մի տեղ կարող են 1000 դրամ դնել, մի տեղ՝ 5 հազար, մի տեղ՝ 12 հազար: Կարեւորն այն է, որ օրենքը թույլ է տալիս սա: Կամ՝ մի կազմակերպություն կարող է սկսել համավճարի մասին օրենքի դրույթը կիրառել, ասենք, հունիսի 1-ից, մյուսը կարող է զգուշորեն սպասել, ընտրություններն ավարտվեն, ու նոր միայն սկսել կիրառել»:

Իհարկե, համավճարը պետք է կոնստանտ թիվ լիներ, իհարկե, պետք է միասնական մոտեցում լիներ, որը չկա, եւ օրենքը խրթին է գրված, ուստիեւ քաղաքացիների դժգոհությունները բնական են: Ընտրությունից առաջ հաստատությունները նույնիսկ բանավոր հրահանգ էին ստացել, որ 3 հազար դրամից ավելի համավճար չկիրառեն, բնականաբար՝ քարոզչական նպատակներով: Բայց ընտրությունն ավարտվեց, եւ բուժհաստատությունները սկսեցին լիարժեք օգտվել համավճար գանձելու հնարավորությունից:

Թե ինչպես՝ Ծաղիկ Վարդանյանը բացատրում է խորհրդատվական ծառայության արժեքի օրինակով: Հայաստանում կոնսուլտացիայի շուկայական գները տատանվում են 10-100 հազարի սահմաններում: Միջին բժշկի կոնսուլտացիայի համար կարող են պահանջել 10-25 հազար: Շատ բարձր գներ էլ կան: Օրինակ, հոգեբուժական որոշ մասնավոր կազմակերպություններ հոգեբույժի կոնսուլտացիայի համար 50-100 հազար դրամ են վերցնում: «Պետությունը կոնսուլտացիայի համար շուկայական գնից ցածր գին է սահմանել՝ 6 հազար դրամ: Բնական է, որ բուժհաստատություններում գայթակղությունը մեծ է լինելու, որ գոնե 10 հազար դարձնեն: Այսինքն, դու սահմանել ես շուկայականից ցածր գին, թույլատրում ես համավճարի կիրառումը ու չես կարգավորում այն, որ ով ոնց ուզի, համավճար կիրառի: Եվ ստացվում է, որ մեկը 5 տոկոս է վերցնում, մեկը՝ 25, մեկը՝ 50»:

Այսպիսով, ընտրություններից առաջ կազմակերպությունները կաշկանդված էին բողոքներով, թեժ գծի բերանն ընկնելու վտանգ կար, իշխանություններին ձայն էր պետք, եւ արձագանքը բողոքներին շատ արագ էր վրա հասնում: Հիմա կազմակերպությունների ձեռքերն ազատվել են: Ի դեպ, առողջության ապահովագրության հիմնադրամի նոր տնօրենը՝ Ռուբեն Մելիքյանը, ֆինանսիստ է, բանկային գործիչ, «Ամիո» բանկի նախկին գլխավոր ֆինանսական տնօրենն է եղել, նաեւ ճգնաժամային լավ կառավարիչ է: Աշխատել է Ղազախստանի «Բերեկկե բանկում», որը հայտնվել էր պատժամիջոցների տակ, եւ այն դուրս է բերել ճգնաժամից: Հիմա ճգնաժամից «հանելու է» մեր ապահովագրական համակարգը, այսինքն՝ աշխատելու է հնարավորինս քիչ փող ծախսել՝ օգտագործելով ՀՀ քաղաքացիների գրպանները:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԵՐԲ ՄԱՌՈՒԿՅԱՆԸ ԴՈՒՐՍ ԵԿԱՎ ՏՆԻՑ, ԹՈՒՅԼ ՉՏՎԵՑԻՆ, ՈՐ ԴՈՒՍՏՐԵՐԸ ՄՈՏԵՆԱՆ ՀՈՐԸ

«Հրապարակի» զրուցակիցը «Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամ **Լուիզա Սարգսյանն** է:

- Երկուշաբթի երեկոյան ոչ միայն Գագիկ Ծառուկյանին ձերբակալեցին, այլեւ նրան պատկանող կենդանիներին քնեցրին եւ տարան Երեւանի կենդանաբանական այգի: Քննչական կոմիտեն ասաց, որ կենդանիներն իրեղեն ապացույց են համարվում, իսկ հանրությունը շոկահարվել է այն փաստից, որ Նիկոլ Փաշինյանն անգամ կենդանիներից է վրեժ լուծում: Ի դեպ, երեկ հայտնի դարձավ, որ առյուծներից մեկը քնից չի արթնացել: Ուզում ենք հասկանալ՝ այդ կենդանիներն օրինակա՞ն են, թե՞ ոչ: Ի՞նչ հիմքով են պահվել դրանք Ծառուկյանի տանը, եւ ի՞նչ հիմքով են կենդանիներին քնեցրել ու առեւանգել:

- Ամեն ինչն էլ օրինական է եղել, կենդանիները նույնպես օրինական են եղել՝ թղթաբանությամբ եւ ամեն ինչով: Ուղղակի աղմուկ բարձրացրին, համացանցը սկսեց քննարկել նաեւ այդ հարցը, սակայն ամենացավալի փաստերից մեկն այն է, որ Հայաստանում այսօր տասը հազար մարդ արթնացավ եւ աշխատանքի չգնաց: Մարդիկ չգիտեն, թե ինչ է լինելու իրենց վիճակը: Մարդիկ գործազուրկ դարձան: Գագիկ Ծառուկյանին պատկանող բոլոր գործարանները փակված են, մի խոսքով՝ ամենուր ապօրինություններ են: Ինչ վերաբերում է կենդանիներին, կենդանիները շատ ճիշտ պայմաններում են պահվել, ոչ մի խնդիր չի եղել նաեւ այս հարցում:

- Այդ դեպքում ո՞րն է կենդանիներին թիրախ դարձնելու պատճառը: Անգամ կենդանիների խրտվիլակներն առգրավվեցին:

- Այս ամբողջ պրոցեսի ժամանակ այնքան շատ են թիրախավորումները եղել, որ դրանք հաշվել հնարավոր չէ: Թիրախավորվում են բոլորը եւ ամեն ինչ: Քարոզարշավի ժամանակ Գագիկ Ծառուկյանը խոսում էր ավելի լավ Հայաստանի մասին, ասում էր, որ պետք է մեգանախագծեր կյանքի կոչել, որ պետք է նոր աշխատատեղեր ավելացնել, հայ մարդու համար պետք է բարեկեցիկ կյանք ապահովել, որպեսզի մարդիկ լավ ապրեն, լավ վարձատրվեն, ընտանիք պահեն, այսօր փաստացի այս ամենի փոխարեն տասը հազար քաղաքացի գործազուրկ է մնացել: Մենք դատարանի բակում կանգնած ենք, մեզ հետ են նաեւ բազմաթիվ գործազուրկ դարձած քաղաքացիներ, քիչ առաջ մի քանի տղամարդ պատմում էին, որ ունեն վեց-յոթ անձից բաղկացած մեծ ընտանիք, եւ իրենք են ընտանիքի միակ կերակրողը, ընտանիքին կերակրել են գործարանում աշխատելով, սակայն այսօր չունեն աշխատանք եւ կանգնել են փաստի առաջ:

- Օրինակ, նույն «Մուլտի վելնես»-ում մարդիկ աբոնեմենտներ են վերցրել, վճարել են մեծ գումարներ, հիմա մարդկանց զրկում են իրենց վճարած գումարի դիմաց մարզվելուց: Կամ՝ Օլիմպավանում:

- Ոչ միայն «Մուլտի վելնես»-ում, այլեւ՝ Օլիմպավանում տարբեր սպորտսմեններ պարապելիս են եղել, ի դեպ՝ խոսքը ոչ միայն հայ սպորտսմենների մասին է, այլեւ՝ օտարազգի: Ի վերջո, մարդիկ օլիմպիական մրցումների են պատրաստվում, մարզվում են եւ այլն, սա արդեն միջազգային մակարդակի խնդիր է: «Մուլտի վելնես»-ում մարզվելու համար էլ մարդիկ գումարներ են վճարել՝ մեկ-երկու տարվա համար, որպեսզի մարզվեն: Ես չեմ կարող իրավապահների այս գործելաոճին գնահատական տալու համար խոսքեր գտնել:

- Ի դեպ, խուզարկության ժամանակ Գագիկ Ծառուկյանի դուստրերին թույլ չէին տալիս մտնել հայրական առանձնատուն: Ինչո՞ւ, ի՞նչ հիմքով:

- Ծառուկյանի դուստրերը երեկ ամբողջ խուզարկության ընթացքում՝ 12 ժամ մեզ հետ միասին դրսում էին: Քանի անգամ մոտեցանք, խնդրեցինք, ասելով, որ դա իրենց հայրական տունն է, սակայն ոչ մի կերպ նրանց ներս մտնել չթողեցին: Անգամ այն ժամանակ, երբ Գագիկ Ծառուկյանը դուրս եկավ առանձնատնից, թույլ չտվեցին, որ դուստրերը մոտենան իրենց հորը: Պատճառաբանություն չկար, չի կարելի, եւ վերջ:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՆՉՈՒ 5, ՈՉ ԹԵ 6 ԵՎ ԱՎԵԼԻ

Հուլիսի 4-ին, Սահմանադրական դատարանի որոշումից հետո, խորհրդարանական ընտրություններին մասնակցած հինգ ընդդիմադիր ուժեր ստորագրել էին համատեղ հայտարարություն, որով ներկայացնում են ընտրությունների արդյունքների եւ հետագա համատեղ պայքարի կազմակերպման մասին իրենց ընդհանրական գնահատականը: Հայտարարությունը ստորագրել էին «Ուժեղ Հայաստանը», «Հայաստան» դաշինքը, «Բարգավաճ Հայաստանը», Հայ ազգային կոնգրեսը եւ Ազգային ժողովրդավարական բեւեռը: Ինչո՞ւ խորհրդարանական ընտրություններին մասնակցած 18 կուսակցություններից միայն 5-ը միացան այս համատեղ հայտարարությանը, չէ՞ որ ընդդիմադիր ներկայացող կուսակցությունների թիվն անհամեմատ ավելի մեծ էր, ինչո՞ւ մյուս կուսակցությունները չմիացան դրան, երբ իրենք էլ էին անխնա քննադատում իշխանությանը: Ինչո՞ւ, օրինակ, «Միասնության թեւերը», «Լուսավոր Հայաստանը», «Նոր ուժը», ԴՕԿ-ը եւ ընդդիմադիր ներկայացող եւ թվում է, թե իշխանության հետ որեւէ առնչություն չունեցող այլ կուսակցություններ չմիացան ընդդիմադիր բեւեռին: Այս հարցի պատասխանն այնքանով է կարեւոր, որ այն շատ մեծ ջրբաժան է, որով որոշվում է, թե իրականում ովքեր էին ընդդիմադիր, իսկ ովքեր են կառավարվում իշխանության կամ իշխանության տերերի կողմից: Այս հարցի պատասխանով է պայմանավորված այն հանգամանքը, թե ինչու է Փաշինյանը կալանավորում եւ փորձում ունեզրկել Գագիկ Ծառուկյանին, կալանքի տակ պահում Սամվել Կարապետյանին, առաջիկայում կարող է կալանավորել Ռոբերտ Քոչարյանին, իսկ մյուսների նկատմամբ չափազանց քնքուշ է ու բարի:

Ամենակարեւոր եւ սկզբունքային հարցը ընտրության արդյունքներին եւ դրանց արդյունքում ձեւավորված իշխանությանը տրվող գնահատականն է: Հայտարարությունը ստորագրած 5 քաղաքական ուժեր համարում են, որ Սահմանադրական դատարանի վճիռը «չի լուծում ձեւավորվող իշխանության լեգիտիմության հարցը. նման պայմաններում ու արձանագրված արդյունքներով ձեւավորված իշխանությունը զուրկ է լեգիտիմությունից»: 5 քաղաքական ուժեր, որոնք միասին ստացել են 500 հազարից ավելի ձայն, Հայաստանի գործող իշխանությանը համարում են ոչ լեգիտիմ, ավելի պարզ ասած՝ ոչ օրինական, երկիրը կառավարելու իրավունքից զուրկ: Ընտրություններին մասնակցած մյուս 14 քաղաքական ուժերն այս գնահատականի հետ համամիտ չեն, նրանք Փաշինյանին եւ նրա իշխանությունը համարում են օրինական: Սահմանադրական դատարանի վճռից հետո հայտարարություն են արել «Միասնության թեւեր» եւ ԴՕԿ կուսակցությունները, կարդացեք այդ հայտարարությունները եւ կհամոզվեք, որ դրանցում ամեն ինչ կա, ամենադաժան քննադատություն, ընտրակեղծարարության, վարչական ռեսուրսի չարաշահման հիշատակումներ, նույնիսկ իշխանության դեմ պայքարը շարունակելու վճռականություն, բայց չկա իշխանության ոչ լեգիտիմ, ոչ օրինական լինելու գնահատական: Մյուսներն ընդհանրապես լռում են, ինչը նշանակում է համաձայնություն ՍԴ որոշման եւ Փաշինյանի հաղթանակի հետ:

Դեռեւս ընտրություններից առաջ ասել ենք, որ իշխանությունը խրախուսում է ընտրություններին մեծ թվով կուսակցությունների մասնակցությունը, ոչ միայն այն պատճառով, որ այդ կուսակցությունները ձայներ են փոշիացնելու, իշխանությունը շատ լավ գիտեր, որ դրանց մի մասն իրենց համար փոշու արժեք չունի եւ ընդունակ չէ նույնիսկ մի քանի հազար ձայն փախցնել, այդ մասնակցությունը պետք էր, որ նրանք ճանաչեին իշխանության լեգիտիմությունը, ճանաչեին հաղթանակի օրինականությունը, ինչը եւ նրանք անում են իրենց լռությամբ կամ անիմաստ աղմուկով: Ինչ կլիներ, եթե, օրինակ, ընտրություններին մասնակցեր 6 կուսակցություն՝ ՔՊ-ն եւ հայտարարությունը ստորագրած 5 կուսակցությունները, կստացվեր, որ մյուս բոլոր մասնակիցները չեն ճանաչում ՔՊ-ի իշխանության օրինականությունը, կամ ընտրությանը մասնակից 18 կուսակցություններից ոչ թե 5-ը, այլ 17-ը ստորագրեին այս հայտարարությունը: Հիմա լրիվ ուրիշ պատկեր է, Փաշինյանը կարող է ասել՝ հետո՞ ինչ, որ 5 կուսակցություն չի ճանաչում մեր օրինականությունը, դրա փոխարեն եւս 12-ը ճանաչում է, ոչինչ, որ այդ 5-ը միասին ստացել են 40 տոկոսից ավելի քվե, իսկ մնացած 12-ը միասին՝ 10 տոկոսից էլ պակաս, կարեւորը՝ որ 12-ը մեծ է 5-ից:

Համատեղ հայտարարությանը չմիանալու մյուս կարեւոր պատճառը կարող էր լինել ապագա Հայաստանի մասին պատկերացումների շուրջ ունեցած տարաձայնությունը: Հայտարարությունը ստորագրած 5 կուսակցությունները համարում են, որ «իշխանափոխությունը եւ նոր որակի ազգային իշխանության ձեւավորումը մնում է երկրում սահմանադրական կարգի վերականգնման, համերաշխության հաստատման եւ անվտանգության ապահովման միակ նախապայմանը»: Հայտարարության հեղինակները կարեւորում են ոչ միայն սոսկ իշխանափոխությունը, այլ նոր իշխանության ազգային լինելը: Ընտրությանը մասնակցած շատ կուսակցություններ ֆինանսավորվել եւ ուղղորդվել են լիբերալ գլոբալիստական շրջանակների կողմից, որոնց համար ցանկացած ազգային ոչ միայն օտար է, այլեւ՝ մերժելի:

Հայաստանում ձեւավորվում է նոր ընդդիմադիր բեւեռ, որը, որոշ պայմանականություններով, կարելի է համարել ազգային պահպանողական, որը հակադրվելու է իշխող ռեժիմին, որն իրականում չունենալով որեւէ արժեքային եւ քաղաքական հենարան՝ միեւնույն ժամանակ կառավարվում է արեւմտյան լիբերալ գլոբալիստական շրջանակների կողմից: Այդ շրջանակների համար Հայաստանի եւ նրա պետականության գոյությունը որեւէ նշանակություն չունի եւ կարող է զոհաբերվել իրենց աշխարհաքաղաքական շահերի սպասարկմանը, այդ թվում եւ Մեծ Թուրանի ծրագրի իրագործմանը: Գագիկ Ծառուկյանը կալանավորվում եւ ունեզրկվում է հենց այդ ծրագրին դեմ լինելու եւ ոչ թե խոշոր սեփականատեր լինելու համար: Հայաստանում ազգային կապիտալի ներկայացուցիչները պետք է փոխարինվեն թուրքական եւ ադրբեջանական կապիտալի կամ այդ կապիտալի հետ սերտորեն փոխկապակցված գործարարներով:

ՀԳ. *Երեկ Հայաստանի ընդդիմադիր դաշտի մի քանի առանցքային կուսակցություններ համատեղ հայտարարություն էին ստորագրել՝ ընդդեմ իշխանության կողմից Գագիկ Ծառուկյանի դեմ սանձազերծված արշավի: Տարօրինակ է, որ հայտարարությանը չէր միացել «Ուժեղ Հայաստանը», թեեւ ասում են՝ առանձին են հայտարարություն անելու: Բայց երբ երկու կուսակցություն համատեղ հայտարարություն է ստորագրում՝ երկրում սահմանադրական կարգը վերականգնելու եւ ազգային իշխանություն ստեղծելու մտադրության մասին, ենթադրվում է, որ բոլորը պետք է միավորվեն:*

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԱՌՅՈՒԾԱՊԱՏՈՒՄ

«Վաղը առավոտյան կգնաք, Գագիկ Ծառուկյանի առյուծները «կգողնաք, կբերեք»… Հուլիսի 5-ի երեկոյան անծանոթ համարից այս բովանդակությամբ SMS-ներ ստացան ՀՀ գրեթե բոլոր ուժային կառույցների ղեկավարները: Սրանք, բնականաբար, խառնվեցին իրար, բայց ոչ թե Գագիկ Ծառուկյանի անունը լսելուց, այլ բուն հրահանգից՝ «գողնալ առյուծներին»: Իրենք իրենց կյանքում շատ բան էին տեսել… Հայաստանում էլ մարդ չէր մնացել, որին գոնե մեկ անգամ բռնած չլինեին, բայց առյուծ դեռ չէին բռնել: Արջ բռնել էին, սատանա բռնել էին, անգամ ՔՊ-ի հետ ասոցացվող կին բռնել էին, բայց առյուծ… Եվ ինչպե՞ս էին Գագիկ Ծառուկյանի առյուծներին առնչակից դարձնելու այն գործերի հետ, որոնք նույնիսկ Գագիկ Ծառուկյանի հետ կապել չեն կարողանում:

Ուժայինների մեջ մի խելացի մարդ է լինում: Ասում է.

- Հա, բայց ինչո՞ւ եք խառնվել իրար, երբ նույնիսկ պարզ չէ, թե ով է այդ SMS-ն ուղարկել: Գուցե դրանով ինչ-որ մեկը մեզ վրա «ղժժո՞ւմ է»: Առաջարկում եմ՝ զանգենք Նիկոլին…

Բոլորը գլխով են անում՝ զանգենք: Դատախազով, ՆԳՆ-ով, ԱԱԾ-ով, քննչականով, հակակոռուպցիոնով, հարկայինով-բանով սկսում են զանգել՝ չի պատասխանում: Զանգում են Արայիկ Հարությունյանին, թե այսպես ու այսպես, SMS ենք ստացել, որ բռնենք Գագիկ Ծառուկյանի առյուծներին… Պատահաբար չգիտե՞ք, թե SMS-ն ով ուղարկած կլինի: Արայիկ Հարությունյանը տեղից ծուլ է լինում եւ ուժայիններին, թե՝ դուք հասկանո՞ւմ եք՝ ում հետ եք խոսում, սա Նիկոլի աշխատակազմն ա, այստեղ նման հիմարություններով չեն զբաղվում:

ԱԱԾ-ն այնտեղից.

- Էդ լուրջ ես ասո՞ւմ… Դուք չէի՞ք, որ մեզ հրահանգել էիք սատանաներ բռնել: Նիկոլն ո՞ւր ա, «տրուբկեն» տուր իրան մի հատ:

- Պարոն Փաշինյանը տեղում չէ, բայց Սվերդլովսկում ա:

- Վաղն առավոտյան կվերադառնա՞:

- Չգիտեմ, նա իր տեղաշարժերի մասին ինձ չի զեկուցում:

- Բա հիմա ի՞նչ անենք, առյուծներին բռնե՞նք…

- Ամեն դեպքում, բռնեք: Ինքը կգա, կիմանանք՝ ինչն ինչոց է: Համ էլ՝ առյուծները հո սատանա չե՞ն, նրանց վերադարձնելը միշտ կա ու կա…

Այսքանը՝ այն մասին, թե ինչ է տեղի ունեցել հունիսի 5-ի վաղ առավոտյան, մինչեւ իրավապահները՝ Գագիկ Ծառուկյանի տուն մտնելը, խուզարկություններ սկսելն ու առյուծներին տանելը: SMS գրողին այդպես էլ չգտնելով՝ սրանք կատարել են հրահանգը եւ հիմա սպասում են, թե ինչ կասի Նիկոլ Փաշինյանն այդ փայլուն գործողության մասին: Մամուլն էլ հո չի գրել, հո ցույց չի տվել: Այնպիսի մանրամասներ են հայտնի դարձել հանրությանը, որ Փաշինյանը, եթե SMS-ն անգամ ինքը չի գրել, ամենամեծ ցանկության դեպքում էլ չի կարողանա չանդրադառնալ խնդրին: Մարդիկ կհարցնեն, չէ՞, պարոն Փաշինյան, դո՞ւք եք առաջնորդել Գագիկ Ծառուկյանի տան վրա գրոհը, դո՞ւք եք կարգադրել տանել առյուծներին, իսկ ինչո՞ւ եք ասել, որ միայն առյուծներին տանեն, Գագիկ Ծառուկյանը բազմաթիվ ընտանի կենդանիներ էլ ունի՝ կովեր, ոչխարներ, ավանակներ, թռչուններ՝ վերջապես…

Ի՞նչ պիտի ասի Նիկոլ Փաշինյանը: Ընտրությունները վերջացել են, ինքը պարտվել է, Սվերդլովսկում կուրսը փոխել… Հո չի՞ կարող նախընտրական օրերի նման հոխորտալ ու սպառնալ՝ բռնելու եմ, «կզըցնելու» եմ, բոմժ եմ դարձնելու: Այդ օրերն անցան ու կարող են այնպիսի օրեր սկսվել, որ ինքն ուզենա էլ, չկարողանա «յախեն» Գագիկ Ծառուկյանից, Սամվել Կարապետյանից ու մյուս մեծահարուստներից ազատել: Դե եկ, Նիկոլ, ու պատասխան տուր ուժայիններիդ՝ ինչու ես այդպիսի SMS ուղարկել նրանց, որ նրանք էլ ինքնաբերաբար կատարել են հրահանգ ու ողջ կազմով ընկել ք.քը:

ՀԳ. *Պարոն Փաշինյան, ես կարող եմ օգնել Ձեզ այս հարցում: Ուղղակի հայտարարեք, որ Դուք այդպիսի հրահանգ չեք տվել, SMS-ը Դուք չեք գրել: Իսկ եթե ոչ այդքան կտրուկ, ապա ավելի մեղմ հայտարարություն կարող եք անել՝ ես չեմ հիշում, որ այդպիսի SMS գրած լինեմ:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՀՈՒՅՍ

ՖՈՆ ԴԵՐ ԼԱՅԵՆԸ ԹՈՂ ԷՐ ՄՂՈՒՄ ՀԱՅ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՉՔԵՐԻՆ

Հայկա ԱԼՈՅԱՆ

Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենն Ադրբեջան այցից հետո՝ հուլիսի 2-ին այցելեց նաեւ Հայաստան, հանդիպեց Նիկոլ Փաշինյանի հետ ու մի շարք «հուսադրող» հայտարարություններ արեց, մասնավորապես հայտարարեց, որ Ռուսաստանը տնտեսական ճնշումների է ենթարկում Հայաստանին, իսկ Եվրամիությունն ամեն ինչ կանի՝ Հայաստանի համար եվրոպական շուկան բացելու համար, եւ, որպես օգնություն, առաջարկեց հնարավորինս շուտ տրամադրել 52 միլիոն եվրո, որոնք պիտի օգնեն բազմազանեցնել մեր առեւտուրը, պաշտպանել ներքին արտադրողին: Տնտեսագետ, քաղաքագետ **Հրանտ Միքայելյանի** հետ «Հրապարակը» փորձեց հասկանալ, թե որքանով էր Ֆոն դեր Լայենն անկեղծ իր հայտարարություններում, եւ իրականում արժե՞ ոգեւորվել նրա հայտարարություններից ու սպասել եվրոպական շուկայի դռների բացվելուն:

- Ուրսուլա ֆոն դեր Լայենը Հայաստան աշխատանքային այցի ժամանակ հայտարարեց, որ Ռուսաստանը ճնշում է Հայաստանին, իսկ Եվրամիությունն իր դռները կբացի հայ արտադրողների առաջ: Սա ԵՄ-ի կողմից հստակ քայլերի մասին հայտարարությո՞ւն էր:

- Տարբեր կերպ կարելի է ընկալել: Մի կողմից, Եվրամիությունը Հայաստանի արտադրողների համար չեղարկեց տարիֆները, այսպիսով, ինչպես հայտարարվեց, հայկական արտադրանքի համար եվրոպական շուկայում դռները բացվեցին, եւ այսպիսով մենք կարող ենք ասել, որ Եվրոպական Միությունն աջակցում է հայ արտադրողներին: Մյուս կողմից, կարելի է ասել, եթե Եվրամիությունը որեւէ պարագայում հետաքրքրված է արտադրողներով եւ գյուղացիներով, ապա չէր դրդի Հայաստանի իշխանությանը, իսկ իրենք, կարելի է ասել, պարտադրել են կոնֆլիկտի մեջ մտնել Ռուսաստանի հետ, որի արդյունքը եղավ այս իրավիճակը: Այս հայտարարություններն աչքերին թոզ փչելուն ավելի մոտ են, այս քայլը, այսինքն, տպավորություն ստեղծելու եւ քաղաքական հետեւանքները Փաշինյանի համար չեզոքացնելուն է նման, քան թե հայ արտադրողներին իրական աջակցության:

- Ֆոն դեր Լայենի այցը Հայաստան իրականում ի՞նչ նպատակ էր հետապնդում: Դա պայմանավորվա՞ծ էր ՀՀ-ԵՄ կապերի խորացմամբ:

- Ուրսուլա ֆոն դեր Լայենի այցը Հայաստան ունի երկու նպատակ: Առաջինը. ընտրություններից հետո ամրապնդել ու հաստատել աջակցությունը ներկա իշխանություններին՝ շատ վիճելի ընտրություններից հետո: Երկրորդը. վերահաստատել Եվրամիության մղումը դեպի Միջին միջանցքի կառուցման ծրագիրը, այդ թվում, այսպես կոչված՝ ԹՐԻՓՓ-ի: Եվ դրա համար Ֆոն դեր Լայենը գնացել էր նաեւ Ադրբեջան եւ այդտեղ գումարային տեսանկյունից լուրջ խոստումներ էր տվել, մինչդեռ Հայաստանում հիմնականում արժեքային խոսակցություններ վարեց:

- Լայենը շեշտում է, որ Ռուսաստանի կողմից Հայաստանի տնտեսական ճնշումներին ԵՄ-ն պատասխան քայլեր է ձեռնարկում, եւ Հայաստանը շուտով կստանա 18 միլիոն եվրո աջակցություն՝ առեւտուրը բազմազանեցնելու համար: Այդ 18 միլիոն եվրոյով ինչպե՞ս են բազմազանեցնելու առեւտուրը, եւ համատարած սահմանափակումների ֆոնին ինչպե՞ս կարելի է աջակցել տնտեսությանը՝ այդ փոքրիկ գումարով:

- Եվրամիությունը գրեթե մեկ ամիս առաջ հայտարարեց, որ Հայաստանին հատկացնելու է 52 միլիոն եվրո, հետո հայտարարվեց, որ Հայաստանին հատկացվելու է 34 միլիոն եվրո, իսկ հիմա՝ 18 միլիոն: Պարզվում է՝ 34 միլիոնն այն 52-ի առաջին տրանշն է, պարտիան է, 18-ը՝ երկրորդի: Այսինքն, նույն գումարը երեք անգամ վաճառվել է... Այս գումարը, իհարկե, շատ մեծ չէ եւ եթե արդյունավետ օգտագործվի, կարող է միայն գյուղացիների կարճաժամկետ կորուստները փոխհատուցել: Սակայն արդյո՞ք դա կարվի, արդյո՞ք իշխանությունները արդյունավետ դա կանեն՝ դա ուրիշ հարց է: Իհարկե, հետաքրքիր է իմանալ, թե ինչ է արվում այստեղ, բայց այս իշխանությունների տնտեսական քաղաքականության քայլերը չեմ կարող մեկնաբանել, պատշաճ տեղեկատվություն չունեմ: Պարզ է, որ եթե գնահատենք կամ հաշվենք ընդհանուր կորուստները՝ Ռուսաստանի կողմից սահմանափակումների պատճառով, ապա այդ ընդհանուր կորուստները 52 միլիոն եվրոյից շատ ավելի մեծ են, բայց ԵՄ-ն այդքան չի հոգալու, իրենք ընդամենը պիտի փոխհատուցեին եւ հոգեբանական աջակցության էֆեկտ ստեղծեին ընտրությունների ֆոնին, որպեսզի Փաշինյանը կարողանա մարսել ընտրությունները եւ առաջ անցնել: Այդքան բան: Այս պահի դրությամբ այդ խնդիրն էր լուծվում:

- Ֆոն դեր Լայենը հայտարարել է. «Մեր ֆինանսական գործընկերների հետ մենք պատրաստ ենք զորագրել ընդհուպ մինչեւ 2 միլիարդ եվրո՝ ռազմավարական տրանսպորտային, էներգետիկ կապուղիների եւ թվանշային պրոյեկտների համար՝ ամբողջ Հարավային Կովկասում: Հայաստանում դա կարող է սատարել ընթացքում գտնվող նախապատրաստվող ծրագրերին՝ ներառյալ սատարել սահմանային անցակետերի եւ ճանապարհային ենթակառուցվածքների զարգացմանը»: Ի՞նչ է նշանակում այս հայտարարությունը, նշված ծրագրերից կամ գումարներից ո՞ր մասն է Հայաստանում ներդրվելու կամ իրագործվելու, եւ Հարավային Կովկասում ո՞վ է դրանից շահելու:

- Այս 2 միլիարդ եվրոն Հայաստանին չի վերաբերում: Այսինքն, այդ գումարից ինչ-որ մի չնչին գումար Հայաստանին էլ կհասնի, սա ամբողջ Միջին միջանցքին ուղղված թիվ է, եւ Ադրբեջանում 200 միլիոն եվրոյի մասին հայտարարությունը Լայենն արել է մի քանի օր առաջ: Ավելի շուտ՝ գումարն ավելի շատ այդտեղ է գնում, չնայած գուցե մի տրանշ էլ Հայաստան հասնի, բայց, ամեն դեպքում, դա միայն Հայաստանի մասին չէ: Եվրամիությունը, այո, հետաքրքրված է միջանցքով, եւ դրա մասին է այս ամեն ինչը: Եվ, ի դեպ, միջանցքը ոչ միայն ճանապարհային, այլեւ էներգետիկ նշանակություն ունի, դրա համար էլ Ուրսուլա ֆոն դեր Լայենն ամեն կերպ սեղմում է Հայաստանը դեպի Թուրքիա, Ադրբեջան էներգակիրների եւ էներգետիկ համակարգերի ինտեգրումը, նաեւ տելեկոմունիկացիոնը մենք տեսնում ենք: Այսինքն, այս քաղաքականությունն ուղղորդված է ԵՄ-ի կողմից:

- Լայենի հայտարարած 18 միլիոն եվրոն, որը նպատակ ունի ամրապնդել երկրի առեւտրային կարողությունները եւ դիվերսիֆիկացնել արտահանման շուկաները, կարո՞ղ են մեղմացնել ՌԴ-ի կողմից տնտեսական սահմանափակումներից առաջացած կորուստները, եթե ոչ՝ ինչո՞ւ:

- Խնդիրը հետեւյալն է. առհասարակ, Հայաստանը կարո՞ղ է ԵՄ շուկայում կոմպենսացնել իր կորուստները ռուսական շուկայից, եւ խնդիրն այն է, որ չի կարող: Հայաստանը չի կարողանալու գտնել իր տեղը եվրոպական շուկայում, որովհետեւ կան լոգիստիկ, ոչ տարիֆային եւ այլ կարգի սահմանափակումներ, որոնք թույլ չեն տա, որ Հայաստանն այնտեղ ամրապնդվի: Այս գումարն ինքնին ոչ մի հարց չի լուծում, իսկ Եվրամիությունը հո զոռով տեղ չի՞ տրամադրելու հայկական ապրանքներին: Այնպես որ, որոշ փոքրիկ քայլեր արվել են, այդ փոքրիկ քայլերը առաջ նույնիսկ Վրաստանի համար ժամանակին չեն արվել, իսկ Հայաստանի համար արվել են, բայց այդ քայլերը վճռորոշ չեն, դրանք ընդամենը փոքրիկ հնարավորություն են բացում: Ինչ վերաբերում է գումարներին, ապա դրանք, իհարկե, շատ փոքր մասն են կազմում այն կորուստների, որոնք կունենանք Ռուսաստանի ուղղությամբ, եւ շատ կարեւոր է, որ այս գումարները գոնե տեղ հասնեն, որպեսզի գյուղացիներն իրենց կորուստները գոնե մասամբ փոխհատուցեն: Եթե այդպես լինի, ապա մենք կունենանք մինուսով անցած տարի, բայց գոնե զրոյացած չեն լինելու այս ճնշման ենթակա ոլորտները:

ՀԱՅԿԱԿԱՆ ԾԻՐԱՆԻ ՋԵՄՈՎ ՇԱՏ ՄԻ ՀՐՃՎԵՔ

Սերոբ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԵՄ ընդլայնման հարցերով հանձնակատար Մարթա Կոսը հայկական ծիրանից ջեմ է պատրաստել եւ ֆեյսբուքյան գրառում արել. «Այս ջեմը ես պատրաստել եմ հայկական ծիրանից: Ծիրանը խորհրդանշում է այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում Հայաստանում: Անցյալ ամիս կայացած ընտրություններում հայերի մեծամասնությունը քվեարկեց այն կուսակցություններին օգտին, որոնք ցանկանում են ավելի սերտ գործընկերություն հաստատել ԵՄ-ի հետ: Ռուսաստանը փորձել էր ազդել քվեարկության վրա՝ սահմանափակելով հայկական մրգերի եւ ծաղիկների ներմուծումը: Ի պատասխան՝ ԵՄ-ն օգնեց Հայաստանին՝ բացելով իր շուկան այս ապրանքներից շատերի համար: Ահա թե ինչու, երբ անցյալ շաբաթ Հայաստանում էի, Բրյուսել վերադարձա ծիրանի հսկայական զամբյուղով: Դրանց մեծ մասը բաժին հասավ ընկերներիս: Մնացածից ես ջեմ պատրաստեցի: Մի ընկեր տեսավ ջեմն ու ասաց. «Ազատության տարաներ»: Իմ կարծիքով՝ արտահայտվելու գեղեցիկ ձեւ էր: Երբ գնում եք սուպերմարկետ, փնտրե՛ք հայկական ծիրան, սալոր կամ բալ: Սա հնարավորություն է՝ անելու մի փոքրիկ քայլ, որը կարող է օգնել հայ ֆերմերներին եւ աջակցել նրանց երկրի ժողովրդավարական ընտրությանը»:

Հայաստանցի փորձագետ Տիգրան Քոչարյանն էլ ֆեյսբուքյան հումորային գրառում էր արել. «Մնաց լոբի առնի, որ ձմռանը գազ ունենա»: Տպավորություն է, թե Ուրսուլա ֆոն դեր Լայենն օրեր առաջ Հայաստան էր այցելել՝ հատուկ ծիրանի ջեմի բաղադրությունը Նիկոլ Փաշինյանից իմանալու համար: Իսկ ավելի լուրջ՝ ես երբեք չեմ սիրել այնպիսի քարոզչական, իմ կարծիքով, էժանագին «ցոլարձակումները», ինչպիսին արել է Մարթա Կոսը: Եվրոպացի բարձրաստիճան պաշտոնյայի համար Հայաստանն ավելին չէ, քան հերթական «գործիքը»՝ Ռուսաստանի դեմ «գեոպոլիտիկ պատերազմը» շարունակելու համար: Կոսի, Ֆոն դեր Լայենի կամ որեւէ այլ եվրապաշտոնյայի համար Հայաստանն ուղղակի հարմար է հարավից Ռուսաստանի համար հնարավոր՝ ցանկացած տեսակի «երկրորդ ճակատ» բացելու համար: Խոսքը ռազմական երկրորդ ճակատի մասին չէ: Դա կարող է լինել նաեւ քաղաքական ու այլ հարթություններում:

Մարթա Կոսը եւ նրա նմանները, մեծ հաշվով, թքած ունեն Հայաստանի էլ, Հայաստանի տնտեսության էլ, Հայաստանի ժողովրդի վրա էլ: Երեկ եթե առիթ ունենային, կգովազդեին, օրինակ, ուկրաինացի մերկապարողներին ու մերկապարուհիներին (ներառյալ նաեւ՝ ուկրաինացի կամ այլ միգրանտ մարմնավաճառներին՝ անկախ սեռից), այսօր նույն «կրքոտությամբ»՝ հայկական ծիրանը, վաղը՝ գուցե մոլդովական խնձորը: Վրացիները, լավ է, խելքի եկան, որոշ եվրոպացի բարձր պաշտոնյաների անկեղծացումներից հետո, ու վրացական գինիները հանեցին մարթակոսերի ու նմանատիպ այլ պաշտոնյաների գովազդելիք ապրանքատեսականու ցանկից: Եվրոպան այդպիսին է: Եվրոպական քաղաքական էլիտաները միշտ էլ նույն «քաղաքական պոռնկության» դիրքերից են հանդես եկել: Այլ հարց է, թե դիմացինն արդյոք կարողանո՞ւմ է «թացը չորից» տարբերել ու կուլ չտալ խայծը: Թե չէ՝ Մարթա Կոսը հայկական ծիրանից ջեմ պատրաստեց: Ճիշտ է Տիգրան Քոչարյանը՝ թող մի քանի կիլո էլ լոբի առնի, որ ձմռանը գազ ունենա:

100 ՈՂԽԱՐ ՈՒՆԻ, ՃԱԿԱՏԻՆ ՊԵՏԻԿ՝ ԷՇ, ԻՐ ՀԱՄԱՐ ԱՊՐՈՒՄ Է՝ «ԱՆՋԱԿԸ» ԴԻՆՋ

Դա բավական էր՝ համոզվելու, որ ընդդիմադիր ուժերը գրեթե չեն հետաքրքրվել, թե մարդիկ ինչ են մտածում գյուղերում, ինչ հոգսերով ու սպասումներով են ապրում: Կարծես նրանց ձայներն այնքան էլ կարեւոր չեն եղել իրենց համար: Իսկ գյուղացիները հաշվի են առել այն, ինչ տեսնում են իրենց աչքով՝ պետական բյուջեի հաշվին մի քիչ ճանապարհների ու կամուրջների շինարարություն, մի քանի տների կառուցման ծրագրեր, որոշակի պետական աջակցություն: Թե ուր է գնում երկիրը, ինչ վտանգներ կարող են լինել վաղը, եւ ինչքանով է Հայաստանը հեռանում ժողովրդավարության ուղուց՝ այդ հարցերը նրանց առօրյա մտածումների կենտրոնում չեն: Այս պայմաններում ընդդիմության պարտությունը գյուղերում, ըստ իս, դարձել է գրեթե անխուսափելի:

Անտառապատ բարձր լանջերին «թառած» Խաշթառակ գյուղն էր իմ առաջին կանգառը: Գյուղը թաղված է խաղողի ու պտղատու այգիների մեջ: Գիտեի, որ այստեղ են նկարահանվել հայկական կինոյի ամենահայտնի ֆիլմերից մեկի՝ «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմի մի շարք տեսարաններ: Գյուղի կենտրոնում հանդիպեցի Խաշթառակի բնակիչ Պավել Ափինյանին, խնդրեցի ցույց տալ ֆիլմում հայտնի դատավարության տեսարանի նկարահանման վայրը: Պավելը ճանապարհը ցույց տվեց, հետո որոշեց «բացել» այցելուի աչքերը. «Մեր գյուղը պատմական վայր է: Այստեղ են նկարահանվել նաեւ «Տղամարդիկ», «Ճանապարհ», «Ջրերը բարձրանում են», «Հուշարձան», «Նամակ» ֆիլմերը: Մեր գյուղն անվանում են «հայկական Հոլիվուդ»: Մեքենայով չեմ տանի՝ ճանապարհը հիմանորոգվում է: Եվ ոչ միայն այդ փողոցը: Գյուղի մյուս փողոցներն էլ են փոխվում՝ թե ասֆալտով, թե տուֆ քարով: Քայլիր, նայիր շուրջդ հիմա, եթե ոչ՝ վաղը չես տեսնի այն ճանապարհները, ինչպես որ կան նկարահանված ֆիլմերում: Կտեսնես՝ ոնց է փոխվում մեր գյուղը: Չի դադարում հետաքրքրասերների, զբոսաշրջիկների հոսքը: Գյուղը փոխում է իր դեմքը: Տեսամք Աղստեւ գետի նոր կամուրջը: Վարարած գետը սրբել-տարել էր մեր կամուրջը: Շատ տառապեցինք, բայց այսօր նորն ունենք: Խաշթառակի նոր տեսանելի փոփոխություններից մեկն էլ Սուրբ Դավիթ Մարգարե եկեղեցին է, որի բակում տեղադրված են նաեւ Երկրորդ համաշխարհային պատերազմի եւ 2020 թ. պատերազմի զոհերի հիշատակի հուշակոթողները: Եկեղեցու մոտ, բարձունքում, տեղադրված է «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմի հերոսներին պատկերող արձանախումբը: Այն ներկայացնում է հենց «ոչխարագողերի» դատավարության տեսարանը, որը նկարահանվել է նույն վայրում»:

Պավելը խոսեց նաեւ վերջին ընտրությունների մասին. «Փոփոխություններն ակնառու են, ահա ինչու գյուղը գրեթե մեկ մարդու նման ընտրեց Նիկոլ Փաշինյանին»: Հունիսի 7-ի ընտրություններում Խաշթառակում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացել է 785 ձայն, «Ուժեղ Հայաստան»-ը՝ 54, «Հայաստան» դաշինքը՝ 27: Խաշթառակը Տավուշի այն գյուղերից է, որտեղ վերջին տարիներին իշխանական ուժը շարունակաբար աշխատանքներ է իրականացրել, աջակցել մարդկանց:

Հաջորդ կանգառը սահմանամերձ Այգեհովիտ գյուղն էր: Այս գյուղն էլ է նույն տրամաբանությամբ ապրում: Այստեղ մարդկանց համար ամենակարեւորը խաղաղությունն է, տան շինարարությունը, երեխաների ու թոռների ապագան, որը, իրենց կարծիքով, վտանգված է, չնայած գյուղի եզրով սահմանն է անցնում: Մարդիկ գիտեն՝ ինչ է պատերազմը: 1990-ին իրենք են որսորդական հրացաններով պաշտպանել գյուղը: Հետո նորից պատերազմներ են տեսել: Արդեն մի քանի տարի կրակոց չկա, եւ այդ խաղաղությունը գյուղի մարդկանց համար մեծ արժեք ունի: Նորակառույց տան մոտ հանդիպեցի Արամ Ղեւոնդյանին: Տուն հրավիրեց, ցույց տվեց նորակառույցը: Մնացել էին միայն ներքին հարդարման աշխատանքները: Արամը պատմեց իր ընտանիքի մասին: Երկու տղային ամուսնացրել է, չորս թոռ ունի: Մեծ օջախ են: Տունը կառուցել են պետության օգնությամբ՝ ստանալով 16 միլիոն դրամ: «Շատ տանջանք ենք տեսել: Տրված օգնությունը, ճիշտ է, բավարար չէ, բայց եթե չլիներ, չէինք էլ համարձակվի նոր տուն կառուցել»: Նրա համար այդ աջակցությունը պարզապես գումար չէր: Դա հնարավորություն է՝ տուն ունենալու, ընտանիքը պահելու, մի քիչ ավելի վստահ նայելու վաղվան:

Նրան հիշեցրի, որ գյուղից ոչ հեռու՝ Կայան բնակավայրի մոտ, Իջեւան-Բերդ ավտոմայրուղու վրա Բարխուդարլու գյուղն է եղել: Ասացի՝ այդ տարածքների հետ կապված իշխանությունն ընտրություններից առաջ ասել է, որ Ադրբեջանին է վերադարձնելու, չի՞ անհանգստացնում դա, որ կարող է նորից վտանգներ ծագեն: Արամի պատասխանը շատ պարզ է. «Վայ, ապրել ենք ու էլի կապրենք կողք-կողքի: Առաջ ո՞նց էր, դոստեր ունեինք, գնում-գալիս էինք... Մի ղարաբաղցի մարդ է ապրում վերեւները: Տուն կառուցեց, կառավարությունն անասուններ տվեց: Հիմա 100 ոչխար ունի, ճակատին պեծիկ էշ էլ ունի: Տես՝ մարդուն օգնում են: Իր համար ապրում է «անջակը» դինջ»: Եվ նորից վերադարձավ նույն մտքին՝ գյուղում հիմա խաղաղ է, մարդիկ ուզում են ապրել. «Դրա համար էլ գնացինք ու միահամուռ Փաշինյանին ընտրեցինք»:

Իջեւանից Վանաձոր վերադառնալու ճանապարհին երթուղային տաքսու վարորդը եւ մի ուղեւոր զրուցում էին ռուս-ուկրաինական պատերազմի մասին: Ուղեւորն այնքան պատկերավոր էր պատմում, որ պատերազմի մասին լսածս տեղեկությունները հանկարծ ստացան ուրիշ չափում: Խոսում էր մարդկանց առօրյայի, խախտված կյանքի, վախի ու անորոշության մասին: Պատմում էր ՌԴ-ում առաջացած բենզինի խնդիրների, հերթերի մասին, որոնք երբեմն կիլոմետրեր են ձգվում: Ասում էր՝ մարդիկ կան, որոնք օգտվում են ստեղծված իրավիճակից. հերթ են կանգնում, իսկ երբ հերթը հասնում է, իրենց տեղն ուրիշին են վաճառում՝ 20 հազար ռուբլով: Պատմում էր նաեւ զորակոչված մարդկանց մասին. «Սկզբում մեծ գումարներ են առաջարկում: Մարդիկ գնում են՝ ընտանիքներին գումար ուղարկելու համար: Հետո նրանց առաջնագիծ են ուղարկում: Ընկերս իր մի ընկերոջ հետ չդիմացավ գայթակղությանը: Տուն լավ փողեր ուղարկեցին: Մի օր էլ երկուսով անհետացան: Ըստ

Երկու օր հյուրընկալվեցի Իջեւանի գյուղերում:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ԿՈՄԵԴԻԱՆԵՐ, ՈՐ ՄԻՆՉ ԱՅՍՕՐ ԴԻՏՎՈՒՄ ԵՆ

Գրձակուրդներն անկարելի է պատկերացնել առանց սիրելի սովետական կատակերգությունների: Հատկապես այն սերնդի համար, որի մանկությունը կապված է սովետական շրջանի հետ, որի համար ռուսական (ներառյալ՝ սովետական) մշակույթն օտար չէ: Գայդայի եւ Ռյազանովի կատակերգությունները հավերժ կարելի է դիտել ու լիաթոք ծիծաղել՝ հիշելով «անմահացած» մեջբերումները, որոնք միշտ ասվում են: Սակայն մեզնից քչերը գիտեն, թե ինչպես է ձեւավորվել կատակերգական կինոժանրը սովետական կինոարվեստում, ինչ պատմություն է ունեցել, ինչ արմատներ:

Նախ նշենք, որ խորհրդային կինոյում կատակերգական ժանրը հենց այնպես՝ դատարկ տեղում չի ձեւավորվել: Նախքան խորհրդային կարգերի հաստատումը, ռուսական կինոն արդեն ունեցել է կատակերգական ժապավեններ՝ թեկուզ կարճամետրաժ: Ռուսական նախասովետական կինոյի վրա բավականին մեծ է եղել Pathé եւ Gaumont ստուդիաների, նաեւ՝ Մաքս Լինդերի կինոնկարների ազդեցությունը: Նախասովետական շրջանում նկարահանվել են էքսցենտրիկ տեսարաններով հոլովակներ, կենցաղային ֆարս, սատիրա, հիմնականում՝ ոչ մեծ ծավալի: Խորհրդային կարգերի հաստատումից եւ քաղաքացիական պատերազմից հետո, ինչպես կյանքի մյուս ոլորտները, կինոն եւս անցավ պետության տնօրինության տակ եւ սկսեց սպասարկել պետական քարոզչությանը:

1918-22 թվականներին կատակերգություններ հազվադեպ էին նկարահանվում: Նկարահանված կարճամետրաժ կատակերգություններում ծաղրում էին սպեկուլյանտներին, բյուրոկրատներին, նոր կարգերի հակառակորդներին: 1922-28 թթ.՝ ՆԷՊ-ի շրջանում, երբ երկիրը համեմատաբար արդեն կայունացել էր, կատակերգությունները սկսում են ավելի հաճախ նկարահանվել: Հիմնական թեմաները, որոնք արծարծվել են այդ շրջանում, կենցաղային կոմեդիա, սատիրական, էքսցենտրիկ, երաժշտական-կրկեսային կոմեդիաներն են: Այս շրջանում խորհրդային կատակերգական կինոնկարների վրա մեծ է եղել հատկապես Չարլի Չապլինի, Բասթեր Քիթոնի եւ Հարոլդ Լլոյդի կինոնկարների ազդեցությունը: Թեեւ եղել է ձգտում՝ ստեղծելու զուտ սովետական կինոկատակերգական ժանր:

Խնդիրն այն էր, որ սովետական կինոկատակերգությունը եւս ենթարկվում էր պետական քարոզչությանն ու գաղափարախոսությանը եւ քաղաքականությունից առանձին գոյություն չուներ: Սակայն նույնիսկ այդ պայմաններում ասպարեզ են գալիս այնպիսի տաղանդավոր ռեժիսորներ, ինչպիսիք են Յակով Պրոտազանովը, Գրիգորի Կոզինցեւը, Լեոնիդ Տրաուբերգը: Նրանց շնորհիվ սովետական կինոկատակերգությունը դառնում է ինքնուրույն ժանր եւ դադարում է լինել զուտ ագիտացիոն: Հատկապես շրջադարձային են եղել 1930-ականները, երբ ի հայտ է եկել հնչյունային կինոն՝ փոխարինելով համր կինոյին: Խորհրդային կինոկատակերգության մեջ հեղափոխական դեր է խաղում ռեժիսոր Գրիգորի Ալեքսանդրովը՝ իր հայտնի ժապավեններով՝ «Ուրախ տղաները», «Կրկեսը», «Վոլգա-Վոլգան»: Նրա կինոնկարներում գլխավոր աստղը լեգենդար Լյուբով Օռլովան էր: Այսպես, քայլ առ քայլ ձեւավորվում է սովետական կինոկատակերգությունը, որը հատկապես ծաղկում է ապրում Հայրենական մեծ պատերազմից հետո:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԱՍՆԱԳՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Հիմա, երբ արդեն հայտնի է, որ խորհրդարան անցած ընդդիմադիր ուժերը ստանձնում են ԱԺ պատգամավորական մանդատները, առաջին պլան է գալիս այդ մանդատները պահելու խնդիրը: ԲՀԿ-ից Փաշինյանը 3 մանդատ գողացավ արդեն՝ ընտրությունների արդյունքները կեղծելու եւ ՍԴ քա-

վորության շնորհիվ: Նա ընդհուպ մոտեցել է սահմանադրական մեծամասնության շեմին, որից ներս անցնելու եւ իր արտաքին գործատուների կամքը կատարելու համար կփորձի ընդդիմությունից հավելյալ մանդատներ խլել: Ինտրիգն այլեւս տեղափոխվում է խորհրդարան: Սկսվում է քաղաքական պայքարի նոր փուլը:

Կողմերը, սակայն, միմյանց դեմ են հայտնվել ոչ միայն խորհրդարանի գորգի վրա, այլեւ՝ փողոցում: Ընտրություններով հասարակական ներքին վեճը չի փարատվել, «հակամարտությունը» շարունակվում է, չկա համերաշխություն, ՍԴ-ն ավելի է խորացրել հանրային պառակտումը: Խորհրդարանում մանդատների հարաբերակցությունը 41-ը 64-ի է, ընդդիմադիր եւ իշխանական էլեկտորատների դիմակայությունը՝ մոտավորապես 600 հազարը՝ 725 հազարի: Այս պայմաններում է, որ մի կերպ վերարտադրված Փաշինյանը կփորձի բարելավել դիրքերը եւ լեգիտիմության շուք հաղորդել իր թիմին ու ապագա կառավարությանը:

Քանի որ ընտրություններն ավարտվել են, եւ նա այլեւս չի կարող ձայնագողությամբ ու թվանկարչությամբ զբաղվել, մնում է, որ ընդդիմադիրներից մանդատներ գողանա, ընդդիմադիր պատգամավորների իրենով անի: Այս երեւույթը հանրության եւ քաղաքագիտության մեջ բնութագրվում է միեւնույն բառով՝ «անասնագողություն»: ՀՀ ԱԺ-ում անասնագողության դեպքերը լայն տարածում ունեն, եւ անարդարացի կլինի հայ հանրությանը մեղադրել իր կասկածների համար, որ այս գումարման խորհրդարանում եւս կարող են նման դեպքեր գրանցվել: Այն էլ կա, որ նախորդ խորհրդարանում տեղի ունեցած բացահայտ անասնագողության դրվագները դեռ թարմ են ժողովրդի հիշողության մեջ:

Ահա եւ մանդատներն ստանձնած ընդդիմադիր ուժերի, ինչպես նաեւ՝ մեկ հայտարարությամբ միավորված մյուս ընդդիմադիրների ընտրազանգվածին հետաքրքրում, ես կասեի՝ մտահոգում է հնարավոր անասնագողության «մոմենտը»՝ իր «քաղաքական ազնվությամբ» աչքի ընկնող Փաշինյանը չի՞ փորձի, արդյոք, մանդատներ շորթել ընդդիմությունից, այլ խոսքով՝ ընդդիմադիր պատգամավոր «գողնալ»... Իզուր ես ժպտում, հարգելի ընթերցող: Եթե դու լավ ես ճանաչում Նիկոլին ու նրա թիմը, ապա պետք է, որ ամեն ինչ սպասես նրանցից: Աչքովդ ես, չէ՞, տեսել Նիկոլի կատարմամբ առերեւույթ անասնագողության դեպքերը: Պարզապես, քո թույլտվությամբ, այդ անասունների անունները չեմ տա այստեղ:

Այս ֆոնին «Հայաստան» դաշինքը վստահեցնում է, որ խորհրդարան է գործուղում գաղափարական եւ անկոտրում թիմ: Սա մեսիջ է ոչ միայն «կասկածներ ունեցող» հանրությանը, այլեւ Նիկոլ Փաշինյանին՝ որ սին հույսեր չփայփայի, թե կկարողանա «մանդատ գողնալ» «Հայաստան» դաշինքից: Չեմ կարծում, թե այս հարցին մատնեի արանքով են նայում մեծությամբ առաջին ընդդիմադիր ֆրակցիայում՝ «Ուժեղ Հայաստանում»: Այսուհանդերձ խոսակցությունները, թե Նիկոլին կհաջողվի շանտաժով ու այլ կարգի ճնշումներով վախեցնել 4-5 ընդդիմադիր պատգամավորների եւ տանել իր ճամբար, շարունակվում են: Մի բան, սակայն, լավ է, որ այդ խոսակցությունների հիմնական տարածողները փողոցում մնացած ընդդիմադիրներն են, որոնք հայտնի են իրական ընդդիմությանը դեռ ընտրություններից առաջ ծուղակը գցելու անպտուղ փորձերով: Հույս ունեմ, որ այս անգամ էլ նրանք կսխալվեն:

Ես կուզենայի արդեն այսօրվանից շրջանառության մեջ դնել «խոտորնակին՝ խոտորնակ» խոսույթը, որը, եթե պրոյեկտենք խնդրո առարկա խոսակցության վրա, ապա կհնչի մոտավորապես այսպես՝ «անասնագողությանը՝ անասնագողություն»: Կարծում եք՝ ՔՊ-ում քի՞չ են այն քաղաքական կենդանիները, որոնց կարելի է պոկել իրենց հոտած ֆրակցիայից եւ բերել ընդդիմություն: Ի վերջո, այսօր իրական ընդդիմության հնարավորություններին ոչ ոք չի կասկածում, էլ չասած աշխարհաքաղաքական զարգացումների մասին, որոնք, ինչպես տեսանք Նիկոլ Փաշինյանի՝ Ռուսաստան վերջին այցի ժամանակ, կարող են իսկական ավերներ գործել ստախոս Եվրոպայի ճանապարհը բռնած նիկոլական սբրոդի մեջ:

ՀԳ. *Ո՞ւր է այն Ռուբեն Ռուբինյանը, որ Նարեկ Կարապետյանին սպառնում էր, թե այսպես կանենք ու այնպես... Ո՞վ, դո՛ւ, քո ֆրակցիա՞ն, որ հույսներդ դրել եք ընդդիմությունից մանդատ «գողնալու» վրա: Ձեր էշը գնացել ա, ապեր... Դու վայթե դառնաս ԱԺ-ն ամենակարճ ղեկավարած նախագահը: Այնպես որ, շատ վեր-վեր մի թռիր, որովհետեւ Նիկոլի էշն էլ է գնացել:*

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am

Ստորագրված է տպագրության 8.07.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՌԱՋՆԱԳԾՈՒՄ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԾԱՆՐ Է

Արա ԱԼՈՅԱՆ

«Հրապարակը» զրուցել է Ուկրաինայի նախագահին առընթեր Ռազմավարական հետազոտությունների ազգային ինստիտուտի (ՌՀԱԻ) փոխտնօրեն, արտաքին հետազոտությունների կենտրոնի ղեկավար **Մաքսիմ Պալամարչուկի** հետ:

- Վոլոդիմիր Զելենսկին հայտարարել է, որ հաստատել է Ռուսաստանի դեմ 40-օրյա հատուկ գործողությունը: Նա նշել է, որ հատուկ օպերացիայի նպատակն է՝ ՌԴ-ին ստիպել դադարեցնել պատերազմը: Եթե առավել մանրամասն՝ ինչ է ենթադրում այս պլանը, ճիշտ է մեկնարկելու այն:

- Նախագահ Զելենսկին տվյալ գործողության մեկնարկի մասին հայտարարեց հունիսի 25-ին՝ Ուկրաինայի անվտանգության ծառայության ղեկավարի պաշտոնակատարի հետ հանդիպման ժամանակ: Սակայն օպերացիայի շրջանակում գործողություններն ինքնին գաղտնի են:

- Այս ամենին զուգահեռ, միայն հուլիսին Ռուսաստանը երկու զանգվածային հարձակում է իրականացրել Ուկրաինայի մայրաքաղաքի ու հարակից շրջանների վրա, որի հետեւանքով բազմաթիվ զոհեր եւ վիրավորներ կան: Կիեւում ինչպիսի՞ն է հիմա վիճակը: Այս պահին կարծես պատերազմի թեժ կետերը Կիեւն ու Կոստանտինովկան են:

- Կիեւում կան բազմաթիվ տուժածներ. հրթիռային հարվածը լուրջ վնաս է հասցրել բնակելի շենքերին: Սակայն սա առաջին օդային հարվածը չէ: Քաղաքը հարմարվել է, եւ բնակիչները որքան հնարավոր է՝ շարունակում են իրենց առօրյա գործունեությունը: Սակայն իրավիճակն առաջնագծում եւ սահմանամերձ քաղաքներում ծանր է: Սումիում, Զապորոժիեում եւ Խերսոնում հակառակորդն ահաբեկում է խաղաղ բնակիչներին ԱԹՍ-ների հարվածներով, հրետանային կրակով եւ ավիառումբերով: Առաջնագծում մարտերը շարունակվում են նաեւ Կոստանտինովկայից շատ ավելի հեռու, չնայած պարզ է, որ ռուսական զորքերը հատկապես այնտեղ են կենտրոնացած:

- Ուկրաինայի ԱԳ նախարար Անդրեյ Սիբիգան հայտնել է, որ հուլիսին Կիեւի վրա երկու լայնածավալ հարձակումներից հետո Ուկրաինան ՄԱԿ-ի ԱԽ արտակարգ նիստ է խնդրել՝ ակնկալելով սկզբունքային ու ուժեղ արձագանք՝ պատերազմը դադարեցնելու եւ երկարատեւ խաղաղության հասնելու համար: Կկարողանա՞ միջազգային հանրությունը գոնե այս անգամ առավել վճռական ու էֆեկտիվ լինել՝ 4 տարուց ավելի շարունակվող արյունահեղությանը վերջ տալու համար:

- Կցանկանայի նման հույս ունենալ, բայց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում վետոյի մեխանիզմը դժվար թե թույլ տա նման սցենարը հավանական համարել:

- Պատերազմը կանգնեցնելու անհրաժեշտության մասին շարունակում է խոսել նաեւ ԱՄՆ նախագահ Թրամփը. այս օրերին Անկարայում ՆԱՏՕ-ի գագաթնաժողովի շրջանակում մտադիր է հանդիպել Զելենսկու հետ, ապա նույն թեմայով զրուցել Պուտինի հետ: Խաղաղության հասնելու տեսակետից, ըստ պաշտոնական Կիեւի, ո՞ր ուժային կենտրոնն է առավել հուսալի այս պահին:

- Իրանի հետ հակամարտության աստիճանական ավարտը հույս է ներշնչում ԱՄՆ խաղաղապահ ջանքերի ակտիվացման համար: Ուկրաինան հետեւողականորեն համագործակցում է բոլոր ազդեցիկ երկրների հետ՝ խաղաղության հասնելու համար: Եթե նրանց դիրքորոշումները մերձենան, ռազմական գործողությունների դադարեցումը, հավանաբար, ավելի շուտ կգա:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am